Azg
armenian daily

8 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2001 ՇԱԲԱԹ 161 (2365)

Մոսկվայի կենտրոնում սպանվել է հայտնի ձեռնարկատեր Անդրանիկ Ներսիսյանը

ՄՈՍԿՎԱ, 7 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Մոսկվայի կենտրոնում, Զոլոգիչեսկայա փողոցում հիլերները սպանել են մի քանի առեւտրային ֆիրմաների հիմնադիր Անդրանիկ Ներսիսյանին: Դա տեղի է ունեցել սեպտեմբերի 6-ին, մոտավորապես ժամը 23.30-ին: Դեմքի մասին միլիցիա է հաղորդել բիզնեսմենի անձնական վարորդը, որին մարդասպանները ձեռ չեն տվել:

Հետաքննության կարծիքով, սպանությունը եղել է պատվիրված եւ լավ ծրագրված: Հաջողվել է պարզել, որ հանցագործությանը մասնակցել է կին հիլեր: Սա վերջին երկու ամիսների ընթացքում պատվիրված սպանությանը կնոջ մասնակցության երկրորդ դեպքն է (առաջին անգամ գնդակահարվել են երկու չեչեններ), ըստ որում կնոջ նշանները համընկնում են: Սակայն միլիցիան չի բացառում, որ հանցագործներից մեկը կանխամտածված կեղծամ է օգտագործում եւ կանացի հագուստ,- հաղորդում է «Ինտերֆաքս» գործակալությունը:

ԻՆՏԵՐՆԵՏ-ԱՍՈՒԼԻՍ

Ռոբերտ Քոչարյան. «Մեր երկիրը գոյատեւման հայեցակարգից անցել է ակտիվ զարգացման»

Երեկ նախագահ Ռոբերտ Քոչարյանը շուրջ 1.5 ժամ պատասխանեց GazetaSNG.ru տեղեկատվական-վերլուծական ինտերնետային պորտալի ընթերցողների հարցերին, որոնք հավաքվել էին սեպտեմբերի 3-ից սկսյալ. GazetaSNG.ru-ի խմբագրության նախաձեռնությամբ: Ինչպես նշեց խմբագրության գլխավոր խմբագրի տեղակալ Նատալյա Շաստիկը, ՀՀ նախագահին ուղղված հարցերը շատ էին, հետեւաբար դրանք տրվեցին առաջնահերթության կարգով: Մեր կողմից ավելացնենք, որ տեղի սղության պատճառով մենք էլ ամփոփեցինք որոշ հարցեր ու պատասխաններ, իսկ 2 հարց ընդհանրապես հանեցինք: Փոխարենը «Ազգի» ինտերնետային էջի հայերեն եւ ռուսերեն ընթերցողները դրանք կկարդան ամբողջությամբ, իսկ անգլերեն, ֆրանսերեն եւ թուրքերեն ամփոփված:



ԱՆԴՐԵՅ ՍԻՄՈՆՈՎ, Մոսկվա – Ինչպիսի՞ն են Ձեր անձնական շփումները ինտերնետի հետ: Ընդհանրապես Դուք ինչպե՞ս եք վերաբերվում երեւակայական շփումներին: Ձեր սերնդի շատ մարդիկ չաթ-երը համարում են անօգուտ, անգամ վնասակար: Դուք Ձեր երեխաներին թույլատրո՞ւմ եք շփվել ինտերնետի միջոցով:

– Ես անձամբ ինտերնետից ակտիվորեն օգտվելու ժամանակ չունեմ, սակայն միջնորդավորված օգտվում եմ. ամեն օր իմ սեղանին դրվում են թղթապանակներ ինտերնետային տարբեր էջերից քաղված տեղեկատվական նյութերով, ինչպես նաեւ էլեկտրոնային փոստով ստացված բազմաթիվ նամակներ: Այսպանով է առայժմ սահմանափակվում իմ շփումն ինտերնետի հետ: Սակայն իմ երեխաներն ակտիվորեն օգտվում են ինտերնետից, չաթ-երից նույնպես: Շատ բան իմանում եմ հենց նրանցից: Ես ողջունում եմ նրանց այդ հետաքրքրությունը եւ չեմ սահմանափակում այն:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, տնտեսագետ – Երբ Դուք ընտրվում էիք նախագահ, ասում էիք, որ Հայաստանին անհրաժեշտ է տնտեսական թռիչք: Սակայն երկրում նույն տնտեսական ծանր իրավիճակն է: Ձեր կարծիքով, Ձեզ հաջողվե՞ց ինչ-որ բան անել:

– Տնտեսապես հզոր Հայաստանն ինձ համար թիվ մեկ նպատակն է: Դուք ճիշտ եք, մենք հիմա էլ շարունակում ենք տնտեսության բնագավառում բազմաթիվ խնդիրներ լուծել, եւ դրանք, այնուամենայնիվ, շարունակում են առաջնային մնալ Հայաստանի համար: Սակայն խնդիրներն այլեւս այն չեն, ինչ երկուերեք տարի առաջ էին: Անցած տարիների ընթացքում Հայաստանի տնտեսական մթնոլորտը էականորեն փոխվել է:

Ամենագլխավորը, ինչին մենք հասել ենք գոյատեւման հայեցակարգից անցումն է ակտիվ զարգացմանը: Մենք բարեփոխել ենք հարկային օրենսդրությունը այն ուղղելով գործարարության զարգացմանը, դատաիրավական համակարգը, ինչի շնորհիվ գործարարները սացել են պատասխանվածության իրական երաշխիքներ:

Տես ► էջ 5

ՄՈՍԿՎԱ

Ռուսաստանը առավելագույնս կաջակցի կարգավորմանը

ՄՈՍԿՎԱ, 7 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունները վերջին մեկուկես-երկու տարում վերընթաց են զարգանում: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալության հաղորդման, այդ մասին այսօր հայտարարել է ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովը Ադրբեջանի ռազմական գերատեսչության ղեկավար գեներալ-գնդապետ Սաֆար Աբիեւի հետ կայացած բանակցություններում:

Բացելով բանակցությունները՝ Սերգեյ Իվանովը նշել է, որ Ադրբեջանի պաշտպանության նախարարի այցը Ռուսաստան ռուս-ադրբեջանական համագործակցության «կարեւոր փուլ կլինի, այդ թվում եւ ռազմական բնագավառում»:

Վստահություն հայտնելով, որ Մոսկվայի եւ Բաքվի հարաբերությունները «կամրապնդվեն», Աբիեւը իսկույն արձարձել է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը: «Հայաստանի կողմից բռնազավթված հողերի խնդիրը չլուծված է մնում»,-ասել է նա: Ադրբեջանի պաշտպանության նախարարը հույս է հայտնել, որ Ռուսաստանը կօգնի ղարաբաղյան խնդրի կարգավորմանը: Ըստ նրա, ղարաբաղյան հակամարտությունը «ազդեցություն է գործում եռխորհրդային տարածության բոլոր հակամարտությունների վրա»:

Բանակցություններից հետո Սերգեյ Իվանովն ընդգծել է, որ «Ռուսաստանը՝ որպես ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահ եւ որպես հին հակամարտության գոտու անմիջական մերձակայքում գտնվող երկիր, առավելագույնս շահագրգռված է, որ այդ հիմնախնդիրը կարգավորվի»: «Որպես միջնորդ եւ Ադրբեջանի ու Հայաստանի հետ լավ հարաբերություններ ունեցող երկիր, Ռուսաստանը մտադիր է այսուհետ էլ որոնել այդ հակամարտության կարգավորման ուղիներ՝ ընդսմին իր կարծիքը կամ իր առաջարկությունները չպարտադրելով գործընկերներին»,-նշել է Սերգեյ Իվանովը: Նա վստահություն է հայտնել, որ «ղարաբաղյան հակամարտության կարգավորումը հնարավոր է նախեւառաջ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ համաձայնության հիման վրա, իսկ Ռուսաստանը պատրաստ է առավելագույնս հնարավոր օգնություն ցույց տալ դրան»:

Հանրահավաքը վերածվեց քաշքշուկի

ԵՐԵՎԱՆ, 7 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Արմենտելի կողմից բողոքավճռի կիրառման դեմ սեպտեմբերի 7-ին հանրահավաք էին նախաձեռնել «Ազգային ժողովրդավարական դաշինք» կուսակցության, Հայաստանի Դեմոկրատական կուսակցության, Հայկոմկուսի, «Ազգային առաջադիմություն», «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցությունների ներկայացուցիչները: Նշենք, սակայն, որ հանրահավաքը Ազատության հրապարակում սկսելու կազմակերպիչների ջանքերը ձախողվեցին: Հանկարծակի շատ բարձր միացված երաժշտությունը նրանց խանգարեց իրենց բողոքն արտահայտել: Ոստիկանների ու հավաքվածների միջեւ ծայր առած քաշքշուկից ինչ-որ չափով տուժեցին նաեւ Աժ պատգամավոր, Ազգային ժողովրդավարական դաշինքի նախագահ Արշակ Սադոյանն ու «Ժողովրդավարական հայրենիք»-ի նախագահ Պետրոս Մակեյանը:

Հանրահավաքն ի վերջո վերածվեց չարտոնված երթի. Ազատության հրապարակում հավաքվածները շարժվեցին դեպի նախագահի նստավայր: Սակայն մինչ երթի մասնակիցները կհասնեին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի շենք, ներքին զորքերը՝ ՀՀ ներքին գործերի փոխնախարար Հովհաննես Վարյանի գլխավորությամբ, արդեն Դեմիրճյան փողոցից փակել էին ճանապարհը դեպի նախագահական նստավայր: Հանրահավաքի կազմակերպիչներն ստիպված իրենց ելույթի համար որպես բեմ ընտրեցին ԳԱԱ-ի դիմացի հարթակը: Չնայած փակվել էր Բաղրամյան պողոտայի երթեւեկությունը, հավաքն արդեն փոքր-ինչ հանգիստ բնույթ կրեց:

Արշակ Սադոյանը հայտարարեց, որ իրենք նախօրոք քաղաքապետարանին տեղեկացրել էին, որ սեպտեմբերի 7-ին հանրահավաք են անցկացնելու: Հովհաննես Վարյանը, սակայն, լրագրողներին հայտնեց, որ քաղաքապետարանը կազմակերպիչներին թույլատրել է հանրահավաքն անցկացնել 15:30-17:30-ն ընկած ժամանակահատվածում, ինչը, սակայն, հանրահավաքի կազմակերպիչներն անտեսել էին:

Ի դեմ, Արշակ Սադոյանն ինչ-որ մեկի հետ հեռախոսազրույցում ասաց հետեւյալ խոսքերը. «Ես կորցնելու բան չունեմ, իսկ դու դեռ շատ բան կկորցնես»: Ըստ հնչած կարծիքների, զրուցակիցը ՀՀ ներքին գործերի նախարար Հայկ Հարությունյանն էր:

Պուտինը ոմանց խորհուրդ է տալիս ոտքի տակ չընկնել

ՄՈՍԿՎԱ, 7 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ - ԱՅՍՏՈՒԹՅՈՒՆ: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել է, որ չեչենների առաջնորդ Ասլան Մասխադովի հետ խաղաղության բանակցությունները հնարավոր կլինեն միայն այն դեպքում, եթե զինաթափվեն չեչենների բոլոր ջոկատները, դաշնային իշխանություններին հանձնվեն «ամենահայտնի ավազակապետերը», եւ եթե չեչենները խոստանան, որ չեն բարձրացնելու անկախության խնդիրը: Բացի այդ Պուտինն ասել է, որ եթե քաղաքական գործիչներից որեւէ մեկը կարող է 1, 2 կամ 3 ամսում երաշխավորել այս պայմանները, թող անի, եթե ոչ՝ թող ոտքի տակ չընկնի ու վայր դնի պատգամավորական մանդատը: Ռուս դիտորդների կարծիքով, Պուտինի ակնարկը վերաբերում էր Բորիս Նեմցովին:

ՕՊԵՐԱ

133 տարի անց բուն «Արշակ Բ»-ի միջազգային պրեմիերան Սան Ֆրանցիսկոյում

Այսօր սեպտեմբերի 8-ին, առաջին անգամ բեմ կբարձրանա եւ Սան Ֆրանցիսկոյի օպերային աշխարհահռչակ թատրոնում միջազգային արվեստասեր հասարակայնության դատին կհանձնվի Տիգրան Չուխաջյանի «Արշակ Բ» օպերան, որն, ըստ այդ նույն օպերայի մասնագետների կարծիքի, լիովին համապատասխանում է 19-րդ դարի իտալական օպերաների ավանդույթներին: Այդ առթիվ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը ողջունելով տվյալ նախաձեռնությունն իրականացնողների անդուլ ջանքերը, նշել է, որ դա իրոք ուշագրավ գնահատանք է միջազգային մշակութային ժառանգությանը հայերի բերած նպաստին, մանավանդ որ իրադարձությունը համընկնում է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ընդունելու 1700-ամյակի տոնակատարություններին: Շնորհակալություն հայտնելով բոլոր մասնակիցներին, նախագահը հույս է հայտնել, որ երեւույթը կծառայի որպես ներշնչանք առավել հետաքրքրություն ցուցաբերելու Հայաստանին, նրա ժողովրդին, պատմությանը, մշակույթին եւ ավանդույթներին:

Ինչպես բազմիցս առիթ ունեցել ենք նշելու, տվյալ «Արշակ Բ»-ն ամբողջովին տարբեր է այն մեկից, որն ավելի քան 50 տարի հրամցվել է մեզ այստեղ՝ Երեւանում: Առաջին անգամ բեմ է հանվում Չուխաջյանի գրած բուն օպերան, որտեղ հայոց աշխարհի 4-րդ դարի անցուք եւ հզոր արքան ներկայացված է սիրային եւ քաղաքական ինտրիգների շղթայում:

Օպերայի բեմադրման մտահղացումը պատկանում է Սան Ֆրանցիսկոյի օպերային նվագախմբի ջութակահար Ժիրայր Սվազլյանին, որն էլ թատրոնի գլխավոր տնօրեն Լոթֆի Մանսուրին է դիմել այդ հարցով մոտ 5 տարի առաջ: Բայց երբ վերջին թատրոնի երաժշտական բաժնի ղեկավար Կիմ Կրաննայի հետ քննարկել է հարցը, պարզել է, որ օպերան խորհրդային շրջանին վայել, միապետին ուղղված գովասանքներով լի մի ստեղծագործություն է, որը հարմար չէ միջազգային բեմին:

Տես ► էջ 2

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

ՀՌԱԿ նորաստեղծ ակումբ Մասիսում

Շարունակվում են ՀՌԱԿ ղեկավարության այցելությունները հանրապետության մարզեր: Երեկ Արարատի մարզի Մասիս քաղաքում տեղի ունեցավ կուսակցության «Մասիս» ակումբի բացման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին ՀՌԱԿ Հանրապետական վարչության անդամներ Գառնիկ Հովակիմյանը եւ Համլետ Կարապետյանը: Տեղի ունեցավ երդման արարողությունը, 15 մասիսցիներ համալրեցին կուսակցության շարքերը: Նորագիրների կնճռահայր Գառնիկ Հովակիմյանը, շնորհավորելով կուսակցական դարձած ընկերներին, նշեց, որ ավանդական այս կուսակցության հարուստ պատմության մեջ գրվել են փառավոր էջեր: Բազմաթիվ ռամկավարներ իրենց մեծ ավանդն են ներդրել հայ մշակույթի, գրականության, գիտության զարգացման գործում, ազգային-քաղաքական կյանքում, եւ կուսակցության անբիծ անցյալը պարտավորեցնող է նաեւ ներկայիս ռամկավարների համար: Արարատի մարզում ՀՌԱԿ պատասխանատվությունը սանձնած Հանրապետական վարչության անդամ Համլետ Կարապետյանն ավելացրեց, որ կուսակցության ներկայիս ղեկավարությունը հավատարիմ է ՀՌԱԿ կարեւորագույն սկզբունքներին, բնավ չի շեղվել ազատականության եւ ժողովրդավարության գաղափարներից:

Նորագիր ռամկավարները զրույցի բռնվեցին՝ խոսելով այժմյան քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձություններից: Մասիսցիները մասնավորապես նշում էին, որ այսօր չեն զգում պետության պաշտպանությունը, ինչին Գառնիկ Հովակիմյանը պատասխանեց, թե օրենքի ուժով պետք է պաշտպանվեն քաղաքացու, մասնավոր սեփականատիրոջ իրավունքները: Քանի դեռ մեր երկրում գործում է ուժի օրենքը եւ ոչ թե օրենքի ուժը, անիմաստ է դրսից ներդրումներ ակնկալել, իսկ առանց ներդրումների անհնար է պատկերացնել մեր երկրի զարգացած տնտեսությունը:

Միաձայն քվեարկությամբ «Մասիս» ակումբի ատենապետ ընտրվեց

վակիմյանը: Ընդունելով կուսակցական դարձած ընկերներին, նշեց, որ ավանդական այս կուսակցության հարուստ պատմության մեջ գրվել են փառավոր էջեր: Բազմաթիվ ռամկավարներ իրենց մեծ ավանդն են ներդրել հայ մշակույթի, գրականության, գիտության զարգացման գործում, ազգային-քաղաքական կյանքում, եւ կուսակցության անբիծ անցյալը պարտավորեցնող է նաեւ ներկայիս ռամկավարների համար: Արարատի մարզում ՀՌԱԿ պատասխանատվությունը սանձնած Հանրապետական վարչությունը՝ ղեկավար

ՊՏՏՎԻՐ, ՊՏՏՎԻՐ, ԿԱՐՈՒՍԵԼ

Նախագահը վրեժխնդրության զո՞հ

«Հանրապետություն» կուսակցության առաջին համագումարը

Ինչպես եւ խոսացել էր, «Հանրապետություն» կուսակցությունն սկսեց քաղաքական թեժ աշունը, որի մեկնարկի կրակոցը հնչեցրեց երեկ հրավիրած իր առաջին համագումարով: Եվ չնայած ներկայացրած հիմնարար սկզբունքներին, համագումարում հնչած հենց առաջին ելույթի առաջին տողերից ակնհայտ դարձավ, որ դրանք զուտ շղարշ են՝ թաքցնելու բուն դրդապատճառները, որոնք հիմք հանդիսացան կուսակցության արագ ձեւավորման համար: Իշխանություններից վռնդված քաղաքական գործիչներն իրենց առաջ խնդիր դրեցին ոչ այնքան նոր սկզբունքներ մշակելը, որքան իշխանափոխության համար մարզիկներ կոփելը՝ ելնելով վրեժխնդիր լինելու իրենց բուռն ցանկությունից: Եվ ազդեցության լծակները կորցնելուց հետո նրանք շուտափույթ հետդարձի ուղիներ փնտրելիս միահամուռ եկան մի եզրակացության: մեղավորը Ռոբերտ Քոչարյանն է, ուրեմն երկրի բարեկորգումները պետք է սկսել նրա պաշտոնանկությամբ: Պատահական չէ, որ համագումարի բացման պահից մինչեւ կուսակցության նախագահ ընտրված Ալբերտ Բազեյանի ավարտական ելույթը միայն Ռոբերտ Քոչարյանին հեռացնելու կոչեր հնչեցին:

«Հանրապետության» բարձրացրած այդ հարցը պարարտ հող գտավ մյուս արմատականների առանցքում, որոնք համագումարի ամբիոնը առիթ դարձրած սկսեցին նույն երգը երգել:

Ավելին, «Հանրապետություն» կուսակցությունը, Ազգային միաբանությունը եւ Ժողովրդական կուսակցությունը հնչեցրին համատեղ կոչ-հայտարարություն, որը ծայրից ծայր հեղեղված է հակաքոչարյանական մեղադրական եզրակացություններով. «Հանրապետության նախագահը, որը պետք է լիներ երկրի օրենքների եւ օրինականության առաջին երաշխավորը, բազմիցս խախտել է սահմանադրությունը, հովանավորել ու հովանավորում է ահաբեկչությունը»: Եվ իբրեւ հիմնավորում այս չափազանց ծանր, քրեական օրենսգրքով դատապարտվող մեղադրանքի, հայտարարությունը սնորագրած ուժերը վկայակոչում են հոկտեմբերի 27-ի ոճրագործության եւ նրա դատավարության նկատմամբ իշխանության դիրքորոշումը: «Ռոբերտ Քոչարյանը մինչեւ օրս պատշաճ գնահատական չի տվել այդ ահաբեկչությանը, ավելին՝ նա ի սկզբանե առաջ քաշելով ահաբեկչության կազմակերպված չլինելու մասին մտացածին վարկածը, ուղղորդել է գործի քննությունը՝ բացահայտ հովանավորություն հանդես բերելով ահաբեկիչների նկատմամբ»:

Այն տպավորությունը կարելի է ստանալ, թե գործն արդեն բացահայտվել է իրենց դատավոր հռչակած այս ուժերի կողմից, իսկ մեղավոր Քոչարյանը գնդակահարության այդպես էլ չի ենթարկվում: Սակայն հայտարարության հեղինակներն անտեսել էին մի շատ կարեւոր հանգամանք. որեւէ կոնկրետ փաստ, կամ հստակ, որ նման փաստեր գոյություն ունեն, այդպես էլ չհնչեցին, եւ շատ պարզ պատճառով, որովհետեւ նման փաստեր նրանք չունեն: Այդ մասին բացահայտ խոսեց ինքը՝ «Հանրապետություն» կուսակցության նախագահ Ալբերտ Բազեյանը, հայտարարելով. «Դրանք բխում են միայն իրադարձությունների տրամաբանական վերլուծությունից»: Սակայն արմատականների համար իրավաբանական հիմնանը»: Եվ իբրեւ հիմնավորում այս չափազանց ծանր, քրեական օրենսգրքով դատապարտվող մեղադրանքի, հայտարարությունը սնորագրած ուժերը վկայակոչում են հոկտեմբերի 27-ի ոճրագործության եւ նրա դատավարության նկատմամբ իշխանության դիրքորոշումը: «Ռոբերտ Քոչարյանը մինչեւ օրս պատշաճ գնահատական չի տվել այդ ահաբեկչությանը, ավելին՝ նա ի սկզբանե առաջ քաշելով ահաբեկչության կազմակերպված չլինելու մասին մտացածին վարկածը, ուղղորդել է գործի քննությունը՝ բացահայտ հովանավորություն հանդես բերելով ահաբեկիչների նկատմամբ»:

Այն տպավորությունը կարելի է ստանալ, թե գործն արդեն բացահայտվել է իրենց դատավոր հռչակած այս ուժերի կողմից, իսկ մեղավոր Քոչարյանը գնդակահարության այդպես էլ չի ենթարկվում: Սակայն հայտարարության հեղինակներն անտեսել էին մի շատ կարեւոր հանգամանք. որեւէ կոնկրետ փաստ, կամ հստակ, որ նման փաստեր գոյություն ունեն, այդպես էլ չհնչեցին, եւ շատ պարզ պատճառով, որովհետեւ նման փաստեր նրանք չունեն: Այդ մասին բացահայտ խոսեց ինքը՝ «Հանրապետություն» կուսակցության նախագահ Ալբերտ Բազեյանը, հայտարարելով. «Դրանք բխում են միայն իրադարձությունների տրամաբանական վերլուծությունից»: Սակայն արմատականների համար իրավաբանական հիմնավորումները պետք էլ չեն: Կարեւորը քաղաքական ակցիաներն են եւ այլ ուժերի համախմբելու գաղափարը, որին երկար-բարակ խորհելուց հետո մարտիրոսաբար նվիրվեցին Ազգային միաբանություն կուսակցությունն ու նրա առաջնորդ Գեղամյանը: Որոշընդոսն հակաքոչարյանական ելույթով նա ցույց տվեց, որ այս նախագահի օրոք իր վարչապետ դառնալու երազանքները գրվել են տաղանդարին: Եվ նույն Գեղամյանը, որ ժամանակին կրծքով էր պաշտպանում Քոչարյանին, վերջնականապես արմատականացավ թերեւս հուսալով, որ Բազեյանից ու Սարգսյանից գուցե ստանա վարչապետի փայփայած աթոռը: Սակայն իշխանափոխությունից հետո վերջիններս կտա՞ն նրան այդ պաշտոնը, կամ կա՞ն արդեն նախագահի, նախարարների թեկնածուներ՝ Ալբերտ Բազեյանը չպարզաբանեց: Փոխարենը վստահ խոսովանեց, որ իրենց կապերը մանուչարյանական ճակատի հետ լուրջ համագործակցության հիմքերի վրա են. «Մենք արդեն իսկ համագործակցում ենք: Իշխանության հանդեպ մեր գնահատականներն ու ներկա իրավիճակի վերաբերյալ մեր վերաբերմունքը համահունչ են: Եվ մենք, եւ ճակատում ընդգրկված ուժերը գտնում ենք, որ առաջնահերթ է Ռոբերտ Քոչարյանի պաշտոնանկության խնդիրը եւ նոր օրինական իշխանության ձեւավորումը»: Եվ իսկապես, Բազեյանն անգամ աշխատած լինելով այս իշխանության մեջ՝ այժմ խոսում է դրանց անօրինականության մասին: Համագումարում ընդունված բանաձեւի մեջ էլ պարզ խոսվում է, թե «ահաբեկչության միջոցով իրականացվել է քաղաքական հեղաշրջում, որի արդյունքում ամբողջ իշխանությունը կենտրոնացել է Ռ. Քոչարյանի եւ նրա վարչախմբի ձեռքում»: Եթե դա այդպես է, ապա ինչո՞ւ պրն Բազեյանը նախքան քաղաքական աշխատելը չէր հրաժարվում պաշտոնից՝ ցույց տալով իշխանության անօրինականությունը:

Ինչպես երեւում է, բոլոր ծանան

ազգային

Ղարաբաղյան պատերազմի հանրագիտարանային բառարանը

Կդառնա եւ հայ ժողովրդի ոգու հուշարձանը, եւ հզոր զենք, եւ գործուն փաստարկ տեղեկատվական պատերազմում

ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

Երբ 1994 թ. մայիսի 14-ին Բիշքեկում, Ռուսաստանի հովանու տակ, եռակողմ պայմանագիր ստորագրվեց դարաբաղյան ռազմաճակատում կրակը դադարեցնելու մասին, ես անմիջապես ձեռք զարկեցի Ղարաբաղյան շարժման առաջին հատորի ստեղծմանը, որի նախաբանում գրել եմ, որ մեր Հայրենական պատերազմի մասին (այս տերմինը հաճախ եմ գործածել իմ գրքում, իմանալով, որ Արցախի պատերազմը պատմագիտության կանոնների համաձայն համարվում է Հայրենական, քանի որ նրանում որոշվում էր հայրենիքի եւ նրա ապագայի բախտը, որոշվում էր համլետյան հարցը՝ լինել թե չլինելը հայրենիքի, որի անունն է Հայաստան) դեռ շատ գրքեր կգրվեն: Որ դեռ կգան ոգեշնչված տարեգիր նոր եղիշեն, որը ապագա սերունդներին կհանձնի արցախյան պատերազմի հերոսների կյանքի պատմությունը: Որ երկիր Նաիրին անպայման կծնի իր հայ Լեւ Տոլստոյին, որը կստեղծի պատերազմի եւ խաղաղության դյուցազներգությունը: Որ մենք ամեն ինչ կունենանք: Ե՛վ վերջնական հաղթանակ, ե՛ւ տարեգրություն, ե՛ւ դյուցազներգություն:

Սակայն ես չէի ենթադրում, թե զինադադարից անմիջապես հետո բազմաթիվ հեղինակներ գրքի շուկան կողողեն, ասենք, մեմուարային ժանրի հրատարակություններով: Հաճախ, հատկապես առաջին տարիներին, դրանք բարալիկ բրոշուրներ էին՝ հանուն հայրենիքի կյանքը զոհած հերոսների սխրանքների մասին: Ինչ-որ մեկը հոգում էր ծախսերը: Հեղինակներն էլ միշտ գտնվում էին: Այդ ժամանակ կոմիտալ աշխատանք կատարեց Անդրանիկ Արզակյանը՝ համառոտ կենսագրական տեղեկություններ հրատարակելով առանց բացառության բոլոր զոհվածների մասին, նրանց լուսանկարներով, պահպանելով ժամանակագրական կարգը՝ սկսած Ղարաբաղյան շարժման ամենասկզբից մինչեւ 1991 թ. դեկտեմբերի 31-ը: Վիքիի աշխատանք է կատարում անդադրում Սասուն Գրիգորյանը, որը դեռ խորհրդային ժամանակներում մի քանի գրքեր հրատարակեց Մեծ հայրենականի ռազմաճակատներում զոհված գրողների, բանաստեղծների, նկարիչների, կոմոզիտորների, երաժիշտների, ինչպես ընդունված էր այն ժամանակ արտահայտվել, ստեղծագործող մտավորականության այլ ներկայացուցիչների մասին: Արդեն լույս են տեսել տասնյակ, եթե չասենք՝ հարյուրավոր ողջ եւ մեռած բանաստեղծների ժողովածուներ: Սակայն գրքային արտադրանքի առյուծի բաժինը հրատարակվել է մի ժանրով, որը պայմանականորեն կարելի կլինի անվանել «ժամանակի մասին եւ իր մասին» կամ «ինքնակենսագրություն»: Եվ դա միանգամայն բնական է: Ժամանակին հրատարակվելու համար հարկավոր էր, հազար ու մի արգելքներ հաղթահարելով, գիրքը մտցնել այս կամ այն տարվա պետական պլանի մեջ եւ համբերությամբ սպասել իր հերթին: Ավելացնենք նաեւ, որ հազվադեպ էր հեղինակի գրած տեքստը համընկնում գրքի վերջնական տարբերակի հետ: Ե՛վ Հեմինգուեյը, ե՛ւ Սթայնբեքը, ե՛ւ հատկապես Սարոյանը հաճախ են խոստովանում, ինչի մասին էլ որ գրում էին, թեկուզ հեռավոր անցյալի իրադարձությունների, միեւնույն է, այստեղ թե այնտեղ՝ դա հեղինակի մասին էր: Քաջ հայտնի է, որ ամեն մի ճակատային նույն փաստը յուրովի է նկարագրում՝ անցկացնելով իր ադրումների միջով, իր անձի միջով: Եվ դա նույնպես տարեգրություն է, փաստաթուղթ: Ահա թե ինչու բոլոր այսպես կոչված «կենսագրական հրատարակություններում» իրադարձությունները սուբյեկտիվ են ներկայացված: Հրատարակչություններն ավանդական «ստուգումների բյուրո» չունենալով, չեն ճշգրտում ոչ ատխարհագրական անունները, ոչ թվականները, ոչ հերոսների անունները, ոչ պատկերվող իրադարձությունների ու երեւույթների ճշմարտացիությունը:

Բնականաբար, հնարավոր չէ ոչ կանգնեցնել այդ պրոցեսները, ոչ էլ ղեկավարել դրանք: Այսօր դրանք կոչվում են շուկայական հարաբերություններ եւ... խոսքի ազատություն: Ի դեպ, ամբողջ ատխարհում (բացի ամբողջատիրական սինդրոմով տառապողներից) նման երեւույթներ նկատվում են: Ով ինչ ուզում՝ հրատարակում է: Միայն թե փող լինի: Սակայն դա չի նշանակում, թե կանգնելով շուկայական հարաբերություններթ փաստի առաջ պետք է հաշվենք ստեղծված դրության հետ, երբ վարկաբեկվում է տարեգրությունը որպես այդպիսին, գեղծվում է նորագույն պատմությունը, որն այս կամ այն չափով բացասաբար պետք է անդրադառնա ապագա հետազոտողների աշխատանքի վրա: Ելքը մեկն է՝ այսօր իսկ սկսել գիտական աշխատանքը՝ Ղարաբաղյան շարժման կամ ավելի կոնկրետ՝ 1988-94 թթ. Արցախյան պատերազմի իսկական պատմությունը կերտելու գործը: Եվ դա պետք է սկսել, իմ կարծիքով, հիմնարար միհատորյակից՝ «Հայրենական մեծ պատերազմը. 1941-45» խորհրդային հանրագիտարանային հրատարակության օրինակով:

Միայն «Հայկական հանրագիտարանն» է ի զորու պետական մակարդակով հաղթահարելու այդ խնդիրը, որը կհանգեցներ Հայաստանի պատմության մեջ այդ բախտորոշ ժամանակաշրջանի՝ ինչպիսին է ստրկացնողների կողմից պարտադրված Արցախյան պատերազմը, բազմակողմանի լուսաբանմանը: Հանրագիտարանային բառարանում պետք է լուսաբանվեն մեր ժողովրդի կյանքի բոլոր կողմերը՝ ինչպես Ղարաբաղյան շարժմանը նախորդած ժամանակաշրջանում, այնպես էլ ազգային-ազատագրական պայքարի պրոցեսում, որ օբյեկտիվորեն վերածեց լիամասշտաբ ժամանակակից հայրենական պատերազմի:

Ի մեծ բարեբախտություն մեզ, «Հայկական հանրագիտարանը» վիքիարի փորձ է կուտակել հանրագիտարանային բազմազան հրատարակությունների ասպարեզում: Բավական է հիշել իսկապես պատմական դարձած տասներեք հատորանոց Հայկական հանրագիտարանը, որը ոեալ պետականության շոշափելի փաստարկ է: 90-ական թթ. առաջին կեսին, հակառակ քաղցին ու ցրտին, խավարին ու զրկանքներին, պահպանվեց բազմափորձ մի կոլեկտիվ, որն իր մեջ ամփոփում է ցանկացած հանրագիտարանի սիրտն ու հոգին՝ «Հայկական հանրագիտարանի» խմբագրական կոլեգիան եւ գիտախմբագրական խորհուրդը:

Վաղուց արդեն ժամանակն է ոչ միայն հայրենակիցների, այլեւ արտասահմանյան ընթերցողների սեղանին դնելու հանրագիտարանային միհատորյակ, որում կտեղակայվեն հոդվածներ բոլոր ճակատամարտերի, ռազմավարական եւ ռազմաճակատային կարեւորագույն գործողությունների մասին, պատմության մասին, ասենք, այնպիսի բնակավայրերի, ինչպիսիք են Քարինտակը, Խնաբադը, Ասկերանը, որոնք միմյանց հարակցված՝ փրկարար վահան դարձան Ստեփանակերտի համար: Գրքում պետք է տեղադրվեն պրոֆեսիոնալների գրած ոչ սուբյեկտիվ, այլ խիստ գիտական հոդվածներ՝ պատմական բոլոր շրջանների գնդերի, բրիգադների, կորպուսների մասին, համառոտ կենսագրական տեղեկություններ՝ ընդհատակի գործիչների, խոշոր ռազմահրամանատարների, հերոսների, թիկունքայինների գործունեության, սփյուռքի եւ նրա օգնության, հայրենական եւ արտասահմանյան գործիչների մասին, որ կոնկրետ օգնություն են հասցրել ռազմաճակատին եւ թիկունքին: Միհատորյակի մեջ հատուկ տեղ պետք է զբաղեցնի նաեւ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջաններում տեղի ունեցած մարտերի նկարագրությունը:

Առաջին անգամ խիստ փաստաթղթային հիմունքների վրա պետք է լուսաբանվեն հայ օդագնացների սխրանքները, հատկապես ուղղաթիռավարների, առանց որոնց նույնիսկ անհնար էր մտածել հաղթանակի մասին՝ անկլավային Ղարաբաղի երկարատեւ պաշարման պայմաններում: Նույն բանը կարելի է ասել նաեւ զինվորական բժիշկների մասին, որոնց շնորհիվ վիրավորների ավելի քան 80 տոկոսը բուժումից հետո վերադարձավ մարտադաշտ:

Գիրքը պետք է նկարագրված լինի շքեղորեն: Ասենք, Շուշիին վերաբերող հոդվածում պետք է զետեղված լինեն ոչ միայն վանդալների կողմից ավերված, այլեւ պատերազմից հետո վերականգնված Ղազանչեցոց տաճարի լուսանկարները, նաեւ մինչհեղափոխական Շուշիի համայնապատկերը եւ իսկական նեկրոպոլը (մեռած քաղաքը) հրդեհից հետո, որ կազմակերպել էին թուրք բարբարոսները: Նույնը վերաբերում է նաեւ Ստեփանակերտին: Այսօր շատ քչերն են հիշում, թե ինչպիսի տեսք ուներ երկրի մայրաքաղաքը մինչ Շուշիի ազատագրումը եւ Աղդամ կրակակետի վերացումը: Քաղաքը հիշեցնում էր պատերազմական տարիների Ստալինգրադը: Այսօր մոռացվել է նույնիսկ այն փաստը, որ ստեփանակերտցիները նկուղից դուրս էին գալիս միայն մեհեն բերել Նովոռոսիյսկը, իսկ Ստալինգրադի պաշտպանության փուլում չէին կարող իրականացնել հարձակողական օպերացիան (1942 թ. նոյեմբերի 19-ից մինչեւ 1943 թ. փետրվարի 2-ը), քանի որ մենք կվիժեցնեինք (1942 թ. հուլիսի 17-ից նոյեմբերի 18-ը) պաշտպանական օպերացիան: Հասկանալի է, որ նման դեպքերում ժամանակն ամեն ինչ իր տեղն է դնում: 1985 թ., պերեստրոյկայի արշալույսին, լույս տեսավ վերոհիշյալ «Հայրենական մեծ՝ պատերազմը 1941-1945» միհատորյակը, եւ «Ստալինգրադյան ճակատամարտ» ընդարձակ հոդվածում արդեն ոչ մի խոսք չկար կուսակցական նախկին լիդերների մասին:

Այդ մենք չենք ասել. «Պատմությունը նույնքան ճշգրիտ գիտություն է, որքան մաթեմատիկան»: Աշխարհի չափ հին մեկ ուրիշ իմաստուն խոսք էլ կա. «Եթե տարեգրությունը թվաբանություն է, ապա գիտական պատմությունը՝ բարձրագույն մաթեմատիկա»: Մնում է կրկնել, որ պատմագիտության բուն էությունը օբյեկտիվությունն ու արդարամտությունն են՝ իրադարձությունների մեկնաբանման եւ պատմական անհատականությունների կերպարների բացահայտման ժամանակ: Եվ այստեղ «Ղարաբաղյան պատերազմը 1988-1994» կոմիտալ հանրագիտարանային բառարանի ստեղծման գաղափարի առնչությամբ պետք է նշել, որ անհրաժեշտ է պահպանել որոշակի սկզբունքներ, որոնց խախտումը կարող է հանգեցնել ավելորդ ասեկոսեների, երբեմն էլ՝ պարսավանքի: Այսպես օրինակ, հոդվածների բոլոր հերոսների լուսանկարները պետք է լինեն խստորեն միեւնույն չափի, ինչպես նաեւ անհրաժեշտ է պահպանել հոդվածների չափը որոշելու սկզբունքը:

Ընդդիմախոսներս, հավանաբար, համաձայնելով կոմիտալ հանրագիտարանային բառարանի հրատարակման գաղափարի անհրաժեշտության հետ, միաժամանակ կարող են նաեւ կասկած հայտնել, թե այդ նախաձեռնությունը կոնկրետ մեր սուղ հնարավորությունների պայմաններում չափից դուրս թանկ հաճույք է: Չեմ վիճում, իսկապես նյութական տեսակետից խոսքը վերաբերում է «բավական թանկ» հաճույքին: Խոսքը, մասնագետների հաշվարկներով, վերաբերում է ավելի քան 3000 հոդվածների, չհաշված պատկերազարդող եւ տեսողական այլ նյութերը: Հայկական հանրագիտարանի խմբագրական կոլեգիան այդ աշխատանքների մեջ պետք է ներգրավի ոչ միայն Ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտին եւ առանձին մասնագետների, այլեւ հանրապետության պաշտպանության նախարարությանը, գրողների միությանը եւ ստեղծագործական այլ միություններին: Կարծում եմ, որ կգտնվեն հայրենակիցներ ինչպես հայրենիքում, այնպես էլ սփյուռքում, ովքեր վերաբազմապատկելով Մանթաշովների սխրանքը, նյութապես կօժանդակեն մեր ժողովրդի համար այդքան կարեւոր հրատարակության լույս աշխարհ գալուն: Այդ եզակի գիրքը կդառնա ոչ միայն իր անկախության համար դաժան պայքարում փայլուն հաղթանակ ձեռք բերած մեր ժողովրդի ոգու հուշարձանը, այլեւ գործուն զենք եւ փաստարկ՝ ինչպես բոլոր մակարդակներով անվերջանալի բանակցային գործընթացներում, այնպես էլ մեզ համար ոչ պակաս կարեւոր քարոզչական եւ տեղեկատվական պատերազմում:

ԱԶԳ

ինտերվիուներ-զրույցներ

Սկիզբը էջ 1

Փոխվել է սեփականաշնորհման նկատմամբ մեր մոտեցումը. գնորդներից մեկի պահանջում են հսկայական երաշխիք, որ ձեռնարկությունը պետք է աշխատի, որ կարվեն բոլոր անհրաժեշտ ներդրումները, կոլեկտիվի հետ կլուծվեն սոցիալական հարցերը: Այս համալիր միջոցառումների արդյունքում սկսեցին աշխատել եւ հզորություն են հավաքում խոշոր ձեռնարկությունները:

Ցանկալի կլիներ, իհարկե, որ տեմպերն ավելի արագ լինեին, իսկ արդյունքները՝ ավելի շոշափելի: Համոզված եմ, որ դա կլինի:

Panarmenian.net, Երեւան- Շատ երկրների ղեկավարներ միանշանակ չեն վերաբերում ինտերնետին: Ինտերնետը մարդկանց դարձնում է դժվար վերահսկելի, պետությունից ավելի փիչ կախված: Հայաստանի ղեկավարությունն ինչպե՞ս է վերաբերվում ինտերնետի զարգացմանը:

- Հայաստանում իրականացվող բոլոր բարեփոխումների իմաստը մարդկանց պետությունից ավելի անկախ դարձնելն է: Իշխանության եւ կառավարման մարմինները պետք է վերահսկվեն հասարակության կողմից, եւ այսպես է, որ ինտերնետը մեծ հնարավորություններ է առաջարկում: Իշխանությունը պետք է աշխատի թափանցիկ եւ լինի կանխատեսելի: Հայաստանում աշխատանքի նման մեթոդները դառնում են առօրեական:

Բացի այդ, ինտերնետի հայկական մասում ներկայումս իրականացվում են շատ հետաքրքիր եւ կարեւոր ծրագրեր, որոնք ունեն տեղեկատվական, կրթական, սոցիալական ուղղվածություն: Այս տարի նման մի նախագիծ՝ հայ դասական գրականության եւ պատմագրության տեքստերի ժողովածուն, արժանացել է նախագահական մրցանակի: Սա, կարծում եմ, ինքնին իմ վերաբերմունքի արտահայտությունն է:

azadinform@azerin.com, **Ադրբեջան- Ինչ է նախատեսում Հայաստանի ղեկավարությունը «փոխզիջում» հասկացության մեջ, եւ փոխզիջման այդ պայմանները կոչոչանի՞ արդյոք Ձեր հասարակությունը:**

- Հայաստանը բազմիցս հայտարարել է հակամարտության լուծման փաթեթային տարբերակին իր հավատարմության մասին: Այս դեպքում, սկզբից եւեթ, կողմերը գիտեն հակամարտության կարգավորման արդյունքում ինչ են ստանում եւ ինչ՝ կորցնում:

Մենք հսկայական ձեւակերպել ենք երեք սկզբունք, որոնք պետք է լինեն կարգավորման հիմքում. հակամարտության կողմերի իրավահավասարություն, ԼՂՀ-ի անկլավային գոյության անհնարինություն, ԼՂՀ-ի բնակչության համար անվտանգության միջազգային երաշխիքներ: Այս սկզբունքների պահպանման դեպքում Հայաստանը կարող է ընակել հնարավոր փոխզիջումային լուծումները:

Ինչ վերաբերում է Ձեր հարցի երկրորդ մասին, ապա, եթե որոշում կայացվի, յուրաքանչյուր կողմի ղեկավար պետք է ունենա անհրաժեշտ քաղաքական կամք բացատրել իր ժողովրդին այդ տարբերակի առավելությունները եւ համոզել ընդունել այն: Եթե նման քաղաքական կամք չկա, ապա այդ ղեկավարն իրավունք չունի բանակցային գործընթացը վարել:

ԼԱՐԻՍԱ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ, Երեւան - Հարգելի Ռոբերտ Սեդրակի, ցանկանում եմ իմ աջակցությունը հայտնել Ձեզ: Ես Ձեզ ընտրել եմ 1998 թ.-ին, եւ հաջորդ անգամ եւս ես ու իմ ընտանիքը կքվեարկենք Ձեր օգտին: Վերջին շրջանում ընդդիմությունն ակտիվացել է, ստեղծվում են նոր կուսակցություններ՝ բացառիկ հասկանալի սկզբունքներով:

Ձեզ չի՞ թվում, որ նրանք պարզապես ուզում են իշխանությունը զավթել: Մինչեւ ե՞րբ եք մտադիր այս ամենը հանդուրժել:

- Շնորհակալություն բարի խոսքերի համար: Իմ համբերությունը բավական է, եւ ես չեմ պատրաստվում փոխել ընդդիմության հետ իմ աշխատանքի գլխավոր սկզբունքը՝ հանդուրժողականությունը: Խոսքը քաղաքական ուժերի կոլուտուրայի մասին է: Անհրաժեշտ է կողմնակալ հարգել գործընկերներին՝ անկախ նրանից, ձեզ դուր են գալիս նրա հայացքները, թե՝ ոչ: Ցավոք, ոչ միշտ եմ համարձակ պատասխան ստանում: Ընդհանուր առմամբ, ընթանում է նորմալ քաղաքական գործընթաց: Ամեն դեպքում, հիմնական քաղաքական կուսակցությունների, խորհրդարանական խմբակցությունների հետ երկխոսությունը բավականին կառուցողական է:

Նախագահին կարելի է եւ պետք է ճնշադատել թերությունների համար: Բայց վիրավորանքների առջեւ նա անպաշտպան է: Ես չեմ կարող նույն կերպ պատասխանել. թույլ չի տալիս հարգանքը պաշտոնի նկատմամբ եւ դաստիարակությունս:

Ես փորձում եմ մարդկանց բացատրել իմ գործողությունները, լինել ազնիվ նրանց նկատմամբ: Իմ այս կամ այն գործողությունը կարող է հանդիպել ճնշադատության, մեկին դուր գալ, մյուսին՝ ոչ: Սակայն, ճնշադատությունը սարսափելի չէ, եթե դու մարդկանց հետ ազնիվ ես, եւ նրանք քեզ հասկանում ու վստահում են:

Ինձ համար գլխավորը կատարած պարտքի զգացումն է մարդկանց առջեւ, որոնք ինձ ընտրել են երկրի նախագահ:

ՌՈՒԲԵՆ ՄԱՍԵՎՈՍՅԱՆ, նախկին ինժեներ- Ձեր կառավարությունն արտասահմանցիներին է վաճառել հեռախոսացանցը, կոնյակի գործարանը, հիմա պատրաստվում է վաճառել էներգահամակարգը: Ի՞նչ է մնում իրեն՝ Հայաստանին: Մինչեւ ե՞րբ պետք է Հայաստանի ազգային հարստությունն այդպես թալանվի: Ի՞նչ ենք մենք թողնելու մեր զավակներին:

- Կայանը ցույց է տվել, որ պետությունը ամենաարդյունավետ սեփականատերը չէ: Հակառակ դեպքում, խորհրդային Միությունը մինչեւ այժմ կծաղկեր: Գործադիր իշխանությունը պետք է ոչ թե կառավարի բիզնեսը, այլ՝ պայմաններ ստեղծի նորմալ տնտեսվարման համար: Սա իմ խորին համոզմունքն է: Այլ հարց է ծիշտ, արդյունավետ սեփականաշնորհումը: Այստեղ, իհարկե, խնդիրներ կան:

Ինչ վերաբերում է կոնյակի գործարանին եւ մյուս ձեռնարկություններին... դրանք ինչպես եղել, այնպես էլ մնում են Հայաստանում: Ավելացնեմ, որ արտասահմանցիներին սեփականաշնորհված ձեռնարկություններն աշխատում են, շատերը՝ բավական հաջող: Ի դեպ, կոնյակի որակն ավելի լավացել է, իսկ գործարանը խաղողի դիմաց վճարումները գյուղացիներին կատարում է ժամանակին:

raisa214@aol.com, **Լոս Անջելես, ԱՄՆ- Ինչո՞ւ Հայաստանը՝ հարթանակած երկիրն, ապրում է տնտեսական չհավասարության եւ քաղաքական մեկուսացման մեջ:**

-Մեր ժողովուրդն, իսկապես, դժվար է ապրում, բայց սոցիալական եւ տնտեսական իրավիճակի համեմատական գնահատականով մենք համադրելի ենք ԱՊՀ մյուս երկրների հետ: Բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքով, ապահովության մակարդակով միջազգային ֆինանսական կազմակերպությունների գնահատմամբ, Հայաստանը վերջին շարքում չէ, իսկ որոշ ցուցանիշներով անգամ առաջատարների թվում է: Դրան զուգահեռ, մեզ մոտ պարզորոշ նկատվում է տնտեսական զարգացման դրական դինամիկա:

«Քաղաքական մեկուսացում» ձեւակերպման կիրառումը Հայաստանի նկատմամբ ինձ զարմացնում է: Կարծում եմ, դուք ուղղակի ծանոթ չեք մեր արտաքին քաղաքական գործունեությանը:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՄԱՐՑԵՎ, քաղաքագետ, Սանկտ Պետերբուրգ- Ինչո՞ւ Հայաստանը՝ հարթանակած երկիրն, ապրում է տնտեսական չհավասարության եւ քաղաքական մեկուսացման մեջ:

-Մեր ժողովուրդն, իսկապես, դժվար է ապրում, բայց սոցիալական եւ տնտեսական իրավիճակի համեմատական գնահատականով մենք համադրելի ենք ԱՊՀ մյուս երկրների հետ: Բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքով, ապահովության մակարդակով միջազգային ֆինանսական կազմակերպությունների գնահատմամբ, Հայաստանը վերջին շարքում չէ, իսկ որոշ ցուցանիշներով անգամ առաջատարների թվում է: Դրան զուգահեռ, մեզ մոտ պարզորոշ նկատվում է տնտեսական զարգացման դրական դինամիկա:

«Քաղաքական մեկուսացում» ձեւակերպման կիրառումը Հայաստանի նկատմամբ ինձ զարմացնում է: Կարծում եմ, դուք ուղղակի ծանոթ չեք մեր արտաքին քաղաքական գործունեությանը:

ՎԱՐԴԳԵՍ ՀԱԿՈԲՅԱՆ, Մոսկվա- Դուք խոսացել էիք, որ այս տարի Հայաստանում կբացվեն 40 հազար աշխատատեղ: Դա ինձ շատ ուրախացրեց: Մոտ հինգ տարի առաջ աշխատավայրում կրճատման պատճառով ես տեղափոխվեցի Ռուսաստան՝ աշխատանք գտնելու: Իսկ հիմա գոնե ինչ-որ հույս է առաջացել: Սակայն, կարծում եմ, որ իմ նմանները շատ են եւ բոլորի համար, միեւնույն է, աշխատանք չի գտնվի: Ի՞նչ եք անում, որ Հայաստանում գործազրկությունն իսկապես, նվազի:

- Գործազրկության նվազեցման ծրագրերն ամենուր նույնն են. տնտեսական աճ, արդյունաբերության, փոքր եւ միջին բիզնեսի զարգացում: Պաշտոնական տվյալներով վերջին ժամանակներս գործազրկությունը կազմում է 17 տոկոս, սակայն իրականում, կարծում եմ, ավելին է:

Այս տարի, իսկապես, մենք մեր առջեւ նպատակ ենք դրել ստեղծել 40 հազար աշխատատեղ: Խոսքն առաջին հերթին այն մասին է, որ կառավարությունն իր տնտեսական քաղաքականությամբ նպաստում է ներդրումների ներգրավմանը եւ նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Հայաստանի համար 40 հազար աշխատատեղ մեկ տարվա ընթացքում՝ բավական բարձր նիշ է: Սակայն, ես կարծում եմ, մենք պետք է ձգտենք հնարավորինս առավելագույն թվերի: Իհարկե, դա չի լուծում գործազրկության խնդիրն ամբողջ Հայաստանում, սակայն մենք արել ենք առաջին կարեւոր քայլը: Տարեվերջին կամփոփենք այդ աշխատանքի արդյունքը: Եվ այդպես մի քանի տարի:

ԱՆԱՏՈԼԻ ՎՈԼԿ, լրագրող- Միջազգայնագետ- Ինչպե՞ս եք Դուք տեսնում հայ-ռուսական հարաբերությունների զարգացումը:

- Այնպես, ինչպես միշտ՝ հիմնված բարեկամության, փոխըմբռնման եւ միմյանց շահերի փոխադարձ հարգման վրա: Հայաստանի եւ Ռուսաստանի հետաքրքրությունները բազմաթիվ առումներով ուղղակի համընկնում են: Առաջին հերթին, հենց դրանով է պայմանավորված ռազմավարական գործընկերությունը մեր երկրների միջեւ: Մեր հարաբերություններին հատուկ նրբերանգ են տալիս արդեն ձեւավորված ավանդույթները՝ մեր համատեղ պատմությունը, մեր ժողովուրդների միջեւ խորը մշակութային կապերը:

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ, Երեւան- Դուք ի՞նչ գիտեք, թե ինչպես են ապրում հասարակ մարդիկ Ձեր երկրում:

- Հայաստանը մեծ երկիր չէ եւ մենակուսանալ հասարակ մարդկանց խնդիրներից ուղղակի հնարավոր չէ: Ես դիրքերից ուղղակի մոտ չեմ մոռանում, որ մեր շատ քաղաքացիներ վատ են ապրում, բայց ես նաեւ գիտեմ, որ մարդկանց օգնել կարելի է միայն կոնկրետ գործերով, որոնք պահանջում են պրագմատիկ մոտեցում, նպատակաուղղված ջանքեր: Մարդիկ ամեն տարի պետք է զգան, որ կոնկրետ ուղղություններով ինչ-որ առաջընթաց է կատարվում: Ցավոք, տնտեսության մեջ առկա դրական տեղաշարժերը հասարակության մի մասը դեռեւս իր առօրյա կյանքում չի զգում: Բայց խնդիրը վերածվում է որակի, եւ մեր ամենօրյա աշխատանքն, անկասկած, կանդրադառնա մեր բոլոր քաղաքացիների կյանքի որակի վրա:

ՌՈՒԲԵՆ ՄԱՍԵՎՈՍՅԱՆ, նախկին ինժեներ- Ձեր կառավարությունն արտասահմանցիներին է վաճառել հեռախոսացանցը, կոնյակի գործարանը, հիմա պատրաստվում է վաճառել էներգահամակարգը: Ի՞նչ է մնում իրեն՝ Հայաստանին: Մինչեւ ե՞րբ պետք է Հայաստանի ազգային հարստությունն այդպես թալանվի: Ի՞նչ ենք մենք թողնելու մեր զավակներին:

- Կայանը ցույց է տվել, որ պետությունը ամենաարդյունավետ սեփականատերը չէ: Հակառակ դեպքում, խորհրդային Միությունը մինչեւ այժմ կծաղկեր: Գործադիր իշխանությունը պետք է ոչ թե կառավարի բիզնեսը, այլ՝ պայմաններ ստեղծի նորմալ տնտեսվարման համար: Սա իմ խորին համոզմունքն է: Այլ հարց է ծիշտ, արդյունավետ սեփականաշնորհումը: Այստեղ, իհարկե, խնդիրներ կան:

Ինչ վերաբերում է կոնյակի գործարանին եւ մյուս ձեռնարկություններին... դրանք ինչպես եղել, այնպես էլ մնում են Հայաստանում: Ավելացնեմ, որ արտասահմանցիներին սեփականաշնորհված ձեռնարկությունները աշխատում են, շատերը՝ բավական հաջող: Ի դեպ, կոնյակի որակն ավելի լավացել է, իսկ գործարանը խաղողի դիմաց վճարումները գյուղացիներին կատարում է ժամանակին:

Csmpltn2B@aol.com- Բարեւ Ձեզ: Իմ անունը Գեւորգ Ալեքսանյան է, ես գրում եմ ԱՄՆ-ից: Ես կցանկանայի հարցնել պարոն նախագահին, թե նա ինչ հայացք է ձեռնարկում տնտեսության ոլորտում, հատկապես փոքր բիզնեսի մասնավոր հատվածում հավասար հնարավորությունների մթնոլորտ ստեղծելու ուղղությամբ:

- Դուք արծարծեցիք շատ կարեւոր հարց: Մասնավոր բիզնեսի համար բարենպաստ պայմանների ստեղծումը Հայաստանի տնտեսության զարգացման գլխավոր նախադրյալն է: Ցավոք, չեմ կարող ասել, որ Հայաստանի անկախ պետության գոյության տասը տարիների ընթացքում մենք միշտ եղել ենք հետեւողական, սակայն որոշ արմատական քայլեր այդ ուղղությամբ արվել են: Ընդունվել են բիզնեսի ոլորտը կարգավորող կարեւորագույն օրենքներ, հսկայական ուրվագծվել են պետական հսկողության սահմանները: Շատ հարցերում հաջողվել է նվազագույնի հասցնել չինովնիկների կամայականությունների հնարավորությունը: Իրականացվել է դատաիրավական համակարգի բարեփոխում, ինչը բիզնեսին պաշտպանվածության կարեւոր երաշխիքներ է տալիս: Զգալիորեն փոխվել է հարկային օրենսդրությունը: Խթանվում է մանր եւ միջին բիզնեսի զարգացումը: Մենք որոշակի արդյունք արդեն ունենք, հատկապես բարձր տեխնոլոգիաների, ծառայությունների, առեւտրի, տուրիզմի, վերամշակման, ադամանդի մշակման, ոսկերչության եւ այլ բնագավառներում:

ԱՐԹԻՆԵ ԱՂԱԲԱԲՅԱՆ, Հայաստան- Որտե՞ղ է համեմատաբար ավելի հետաքրքիր՝ ներքի՞ն, թե՞ արտաքին քաղաքականության ոլորտում:

- Դժվարանում եմ համեմատական գնահատականներ տալ: Այդ ամենը փոխկապակցված են: Պարզ ներքին հարցերը կապված սոցիալական հիմնախնդիրների, աշխատատեղերի ստեղծման հետ, ենթադրում են արտաքին քաղաքական բնույթի խնդիրների ողջ համալիրի լուծում եւ հակառակը: Դա ամենօրյա աշխատանք է, որը երբեք հետաքրքիր չի լինում:

ՇԱԽԻՄ ԱԼԻԵՎ, Բաքու - Դուք համաձա՞յն եք, որ Հայաստանն այսօր շահել է տոկոսային ճակատամարտը, այլ՝ ոչ թե պատերազմը: Դուք չեք ընդունում, որ Հայաստանի տնտեսական ռեսուրսները շատ թույլ են, որպեսզի ապահովեն նրա վերջնական հաղթանակը: Դուք անհանգստություն չունե՞ք Ադրբեջանի կողմից դարաբաղյան անջատողականների դեմ հակաահաբեկչական գործողություններից:

- Շատ հարցը մի քիչ չար է: Կարծում եմ, եւ Ադրբեջանի, եւ Հայաստանի, եւ Հարավային Կովկասի բոլոր երկրների համար ամենագլխավորը հասկանալն է, որ գերագույն նպատակն է՝ շահել խաղաղությունը: Կյանքը ոչ մեկ անգամ է ցույց տվել, որ յուրաքանչյուր թշնամություն մեր տարածաշրջանում՝ լինի դա ճակատամարտ, պատերազմ, թե ուղղակի սառը դիմակայություն, ոչ ոքի օգուտ չի բերում: Դուք, որպես Ադրբեջանի բնակիչ, հավանաբար նույնպես դա զգում եք: Մեր տարածաշրջանը կարող է բարգավաճել, եթե այստեղ հաստատվի ամուր խաղաղություն եւ կայունություն, հենց դրան են ուղղված Հայաստանի ղեկավարության ջանքերը:

Ինչ վերաբերում է ռեսուրսներին, ապա Դուք կարող եք փաստերով համոզվել, որ Հայաստանի տնտեսությունը զարգանում է ոչ պակաս արագ տեմպերով, քան Ադրբեջանինը: Ի դեպ, քաղաքականության մեջ նավթային ռոմանտիզմը շատերին է հուսախաբել:

Ինչ վերաբերում է անհանգստությանը... Անցած տարիների ընթացքում երկու կողմերն էլ կազմավորել են պաշտպանության բավականին հզոր համակարգ: Կա մեծ վստահություն, որ եւ ռազմական, եւ քաղաքական առումով,

Ռոբերտ Քոչարյան. «Մեր երկիրը գոյատեւման հայեցակարգից անցել է ակտիվ զարգացման»

տեղ է, որ ինտերնետը մեծ հնարավորություններ է առաջարկում: Իշխանությունը պետք է աշխատի թափանցիկ եւ լինի կանխատեսելի: Հայաստանում աշխատանքի նման մեթոդները դառնում են առօրեական:

Բացի այդ, ինտերնետի հայկական մասում ներկայումս իրականացվում են շատ հետաքրքիր եւ կարեւոր ծրագրեր, որոնք ունեն տեղեկատվական, կրթական, սոցիալական ուղղվածություն: Այս տարի նման մի նախագիծ՝ հայ դասական գրականության եւ պատմագրության տեքստերի ժողովածուն, արժանացել է նախագահական մրցանակի: Սա, կարծում եմ, ինքնին իմ վերաբերմունքի արտահայտությունն է:

azadinform@azerin.com, **Ադրբեջան- Ինչ է նախատեսում Հայաստանի ղեկավարությունը «փոխզիջում» հասկացության մեջ, եւ փոխզիջման այդ պայմանները կոչոչանի՞ արդյոք Ձեր հասարակությունը:**

- Հայաստանը բազմիցս հայտարարել է հակամարտության լուծման փաթեթային տարբերակին իր հավատարմության մասին: Այս դեպքում, սկզբից եւեթ, կողմերը գիտեն հակամարտության կարգավորման արդյունքում ինչ են ստանում եւ ինչ՝ կորցնում:

Մենք հսկայական ձեւակերպել ենք երեք սկզբունք, որոնք պետք է լինեն կարգավորման հիմքում. հակամարտության կողմերի իրավահավասարություն, ԼՂՀ-ի անկլավային գոյության անհնարինություն, ԼՂՀ-ի բնակչության համար անվտանգության միջազգային երաշխիքներ: Այս սկզբունքների պահպանման դեպքում Հայաստանը կարող է ընակել հնարավոր փոխզիջումային լուծումները:

Ինչ վերաբերում է Ձեր հարցի երկրորդ մասին, ապա, եթե որոշում կայացվի, յուրաքանչյուր կողմի ղեկավար պետք է ունենա անհրաժեշտ քաղաքական կամք բացատրել իր ժողովրդին այդ տարբերակի առավելությունները եւ համոզել ընդունել այն: Եթե նման քաղաքական կամք չկա, ապա այդ ղեկավարն իրավունք չունի բանակցային գործընթացը վարել:

ԼԱՐԻՍԱ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ, Երեւան - Հարգելի Ռոբերտ Սեդրակի, ցանկանում եմ իմ աջակցությունը հայտնել Ձեզ: Ես Ձեզ ընտրել եմ 1998 թ.-ին, եւ հաջորդ անգամ եւս ես ու իմ ընտանիքը կքվեարկենք Ձեր օգտին: Վերջին շրջանում ընդդիմությունն ակտիվացել է, ստեղծվում են նոր կուսակցություններ՝ բացառիկ հասկանալի սկզբունքներով:

Ձեզ չի՞ թվում, որ նրանք պարզապես ուզում են իշխանությունը զավթել: Մինչեւ ե՞րբ եք մտադիր այս ամենը հանդուրժել:

- Շնորհակալություն բարի խոսքերի համար: Իմ համբերությունը բավական է, եւ ես չեմ պատրաստվում փոխել ընդդիմության հետ իմ աշխատանքի գլխավոր սկզբունքը՝ հանդուրժողականությունը: Խոսքը քաղաքական ուժերի կուլտուրայի մասին է: Անհրաժեշտ է կողմնակալ հարգել գործընկերներին՝

ՌՈՒԲԵՆ ՄԱՍԵՎՈՍՅԱՆ, նախկին ինժեներ- Ձեր կառավարությունն արտասահմանցիներին է վաճառել հեռախոսացանցը, կոնյակի գործարանը, հիմա պատրաստվում է վաճառել էներգահամակարգը: Ի՞նչ է մնում իրեն՝ Հայաստանին: Մինչեւ ե՞րբ պետք է Հայաստանի ազգային հարստությունն այդպես թալանվի: Ի՞նչ ենք մենք թողնելու մեր զավակներին:

- Կայանը ցույց է տվել, որ պետությունը ամենաարդյունավետ սեփականատերը չէ: Հակառակ դեպքում, խորհրդային Միությունը մինչեւ այժմ կծաղկեր: Գործադիր իշխանությունը պետք է ոչ թե կառավարի բիզնեսը, այլ՝ պայմաններ ստեղծի նորմալ տնտեսվարման համար: Սա իմ խորին համոզմունքն է: Այլ հարց է ծիշտ, արդյունավետ սեփականաշնորհումը: Այստեղ, իհարկե, խնդիրներ կան:

Ինչ վերաբերում է կոնյակի գործարանին եւ մյուս ձեռնարկություններին... դրանք ինչպես եղել, այնպես էլ մնում են Հայաստանում: Ավելացնեմ, որ արտասահմանցիներին սեփականաշնորհված ձեռնարկությունները աշխատում են, շատերը՝ բավական հաջող: Ի դեպ, կոնյակի որակն ավելի լավացել է, իսկ գործարանը խաղողի դիմաց վճարումները գյուղացիներին կատարում է ժամանակին:

raisa214@aol.com, **Լոս Անջելես, ԱՄՆ- Ինչո՞ւ Հայաստանը՝ հարթանակած երկիրն, ապրում է տնտեսական չհավասարության եւ քաղաքական մեկուսացման մեջ:**

-Մեր ժողովուրդն, իսկապես, դժվար է ապրում, բայց սոցիալական եւ տնտեսական իրավիճակի համեմատական գնահատականով մենք համադրելի ենք ԱՊՀ մյուս երկրների հետ: Բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքով, ապահովության մակարդակով միջազգային ֆինանսական կազմակերպությունների գնահատմամբ, Հայաստանը վերջին շարքում չէ, իսկ որոշ ցուցանիշներով անգամ առաջատարների թվում է: Դրան զուգահեռ, մեզ մոտ պարզորոշ նկատվում է տնտեսական զարգացման դրական դինամիկա:

«Քաղաքական մեկուսացում» ձեւակերպման կիրառումը Հայաստանի նկատմամբ ինձ զարմացնում է: Կարծում եմ, դուք ուղղակի ծանոթ չեք մեր արտաքին քաղաքական գործունեությանը:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՄԱՐՑԵՎ, քաղաքագետ, Սանկտ Պետերբուրգ- Ինչո՞ւ Հայաստանը՝ հարթանակած երկիրն, ապրում է տնտեսական չհավասարության եւ քաղաքական մեկուսացման մեջ:

-Մեր ժողովուրդն, իսկապես, դժվար է ապրում, բայց սոցիալական եւ տնտեսական իրավիճակի համեմատական գնահատականով մենք համադրելի ենք ԱՊՀ մյուս երկրների հետ: Բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքով, ապահովության մակարդակով միջազգային ֆինանսական կազմակերպությունների գնահատմամբ, Հայաստանը վերջին շարքում չէ, իսկ որոշ ցուցանիշներով անգամ առաջատարների թվում է: Դրան զուգահեռ, մեզ մոտ պարզորոշ նկատվում է տնտեսական զարգացման դրական դինամիկա:

«Քաղաքական մեկուսացում» ձեւակերպման կիրառումը Հայաստանի նկատմամբ ինձ զարմացնում է: Կարծում եմ, դուք ուղղակի ծանոթ չեք մեր արտաքին քաղաքական գործունեությանը:

ՎԱՐԴԳԵՍ ՀԱԿՈԲՅԱՆ, Մոսկվա- Դուք խոսացել էիք, որ այս տարի Հայաստանում կբացվեն 40 հազար աշխատատեղ: Դա ինձ շատ ուրախացրեց: Մոտ հինգ տարի առաջ աշխատավայրում կրճատման պատճառով ես տեղափոխվեցի Ռուսաստան՝ աշխատանք գտնելու: Իսկ հիմա գոնե ինչ-որ հույս է առաջացել: Սակայն, կարծում եմ, որ իմ նմանները շատ են եւ բոլորի համար, միեւնույն է, աշխատանք չի գտնվի: Ի՞նչ եք անում, որ Հայաստանում գործազրկությունն իսկապես, նվազի:

- Գործազրկության նվազեցման ծրագրերն ամենուր նույնն են. տնտեսական աճ, արդյունաբերության, փոքր եւ միջին բիզնեսի զարգացում: Պաշտոնական տվյալներով վերջին ժամանակներս գործազրկությունը կազմում է 17 տոկոս, սակայն իրականում, կարծում եմ, ավելին է:

Այս տարի, իսկապես, մենք մեր առջեւ նպատակ ենք դրել ստեղծել 40 հազար աշխատատեղ: Խոսքն առաջին հերթին այն մասին է, որ կառավարությունն իր տնտեսական քաղաքականությամբ նպաստում է ներդրումների ներգրավմանը եւ նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Հայաստանի համար 40 հազար աշխատատեղ մեկ տարվա ընթացքում՝ բավական բարձր նիշ է: Սակայն, ես կարծում եմ, մենք պետք է ձգտենք հնարավորինս առավելագույն թվերի: Իհարկե, դա չի լուծում գործազրկության խնդիրն ամբողջ Հայաստանում, սակայն մենք արել ենք առաջին կարեւոր քայլը: Տարեվերջին կամփոփենք այդ աշխատանքի արդյունքը: Եվ այդպես մի քանի տարի:

ԱՆԱՏՈԼԻ ՎՈԼԿ, լրագրող- Միջազգայնագետ- Ինչպե՞ս եք Դուք տեսնում հայ-ռուսական հարաբերությունների զարգացումը:

- Այնպես, ինչպես միշտ՝ հիմնված բարեկամության, փոխըմբռնման եւ միմյանց շահերի փոխադարձ հարգման վրա: Հայաստանի եւ Ռուսաստանի հետաքրքրությունները բազմաթիվ առումներով ուղղակի համընկնում են: Առաջին հերթին, հենց դրանով է պայմանավորված ռազմավարական գործընկերությունը մեր երկրների միջեւ: Մեր հարաբերություններին հատուկ նրբերանգ են տալիս արդեն ձեւավորված ավանդույթները՝ մեր համատեղ պատմությունը, մեր ժողովուրդների միջեւ խորը մշակութային կապերը:

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ, Երեւան- Դուք ի՞նչ գիտեք, թե ինչպես են ապրում հասարակ մարդիկ Ձեր երկրում:

- Հայաստանը մեծ երկիր չէ եւ մենակուսանալ հասարակ մարդկանց խնդիրներից ուղղակի հնարավոր չէ: Ես դիրքերից ուղղակի մոտ չեմ մոռանում, որ մեր շատ քաղաքացիներ վատ են ապրում, բայց ես նաեւ գիտեմ, որ մարդկանց օգնել կարելի է միայն կոնկրետ գործերով, որոնք պահանջում են պրագմատիկ մոտեցում, նպատակաուղղված ջանքեր: Մարդիկ ամեն տարի պետք է զգան, որ կոնկրետ ուղղություններով ինչ-որ առաջընթաց է կատարվում: Ցավոք, տնտեսության մեջ առկա դրական տեղաշարժերը հասարակության մի մասը դեռեւս իր առօրյա կյանքում չի զգում: Բայց խնդիրը վերածվում է որակի, եւ մեր ամենօրյա աշխատանքն, անկասկած, կանդրադառնա մեր բոլոր քաղաքացիների կյանքի որակի վրա:

ՌՈՒԲԵՆ ՄԱՍԵՎՈՍՅԱՆ, նախկին ինժեներ- Ձեր կառավարությունն արտասահմանցիներին է վաճառել հեռախոսացանցը, կոնյակի գործարանը, հիմա պատրաստվում է վաճառել էներգահամակարգը: Ի՞նչ է մնում իրեն՝ Հայաստանին: Մինչեւ ե՞րբ պետք է Հայաստանի ազգային հարստությունն այդպես թալանվի: Ի՞նչ ենք մենք թողնելու մեր զավակներին:

- Կայանը ցույց է տվել, որ պետությունը ամենաարդյունավետ սեփականատերը չէ: Հակառակ դեպքում, խորհրդային Միությունը մինչեւ այժմ կծաղկեր: Գործադիր իշխանությունը պետք է ոչ թե կառավարի բիզնեսը, այլ՝ պայմաններ ստեղծի նորմալ տնտեսվարման համար: Սա իմ խորին համոզմունքն է: Այլ հարց է ծիշտ, արդյունավետ սեփականաշնորհումը: Այստեղ, իհարկե, խնդիրներ կան:

Ինչ վերաբերում է կոնյակի գործարանին եւ մյուս ձեռնարկություններին... դրանք ինչպես եղել, այնպես էլ մնում են Հայաստանում: Ավելացնեմ, որ արտասահմանցիներին սեփականաշնորհված ձեռնարկությունները աշխատում են, շատերը՝ բավական հաջող: Ի դեպ, կոնյակի որակն ավելի լավացել է, իսկ գործարանը խաղողի դիմաց վճարումները գյուղացիներին կատարում է ժամանակին:

Csmpltn2B@aol.com- Բարեւ Ձեզ: Իմ անունը Գեւորգ Ալեքսանյան է, ես գրում եմ ԱՄՆ-ից: Ես կցանկանայի հարցնել պարոն նախագահին, թե նա ինչ հայացք է ձեռնարկում տնտեսության ոլորտում, հատկապես փոքր բիզնեսի մասնավոր հատվածում հավասար հնարավորությունների մթնոլորտ ստեղծելու ուղղությամբ:

- Դուք արծարծեցիք շատ կարեւոր հարց: Մասնավոր բիզնեսի համար բարենպաստ պայմանների ստեղծումը Հայաստանի տնտեսության զարգացման գլխավոր նախադրյալն է: Ցավոք, չեմ կարող ասել, որ Հայաստանի անկախ պետության գոյության տասը տարիների ընթացքում մենք միշտ եղել ենք հետեւողական, սակայն որոշ արմատական քայլեր այդ ուղղությամբ արվել են: Ընդունվել են բիզնեսի ոլորտը կարգավորող կարեւորագույն օրենքներ, հսկայական ուրվագծվել են պետական հսկողության սահմանները: Շատ հարցերում հաջողվել է նվազագույնի հասցնել չինովնիկների կամայականությունների հնարավորությունը: Իրականացվել է դատաիրավական համակարգի բարեփոխում, ինչը բիզնեսին պաշտպանվածության կարեւոր երաշխիքներ է տալիս: Զգալիորեն փոխվել է հարկային օրենսդրությունը: Խթանվում է մանր եւ միջին բիզնեսի զարգացումը: Մենք որոշակի արդյունք արդեն ունենք, հատկապես բարձր տեխնոլոգիաների, ծառայությունների, առեւտրի, տուրիզմի, վերամշակման, ադամանդի մշակման, ոսկերչության եւ այլ բնագավառներում:

ԱՐԹԻՆԵ ԱՂԱԲԱԲՅԱՆ, Հայաստան- Որտե՞ղ է համեմատաբար ավելի հետաքրքիր՝ ներքի՞ն, թե՞ արտաքին քաղաքականության ոլորտում:

- Դժվարանում եմ համեմատական գնահատականներ տալ: Այդ ամենը փոխկապակցված են: Պարզ ներքին հարցերը կապված սոցիալական հիմնախնդիրների, աշխատատեղերի ստեղծման հետ, ենթադրում են արտաքին քաղաքական բնույթի խնդիրների ողջ համալիրի լուծում եւ հակառակը: Դա ամենօրյա աշխատանք է, որը երբեք հետաքրքիր չի լինում:

ՇԱԽԻՄ ԱԼԻԵՎ, Բաքու - Դուք համաձա՞յն եք, որ Հայաստանն այսօր շահել է տոկոսային ճակատամարտը, այլ՝ ոչ թե պատերազմը: Դուք չեք ընդունում, որ Հայաստանի տնտեսական ռեսուրսները շատ թույլ են, որպեսզի ապահովեն նրա վերջնական հաղթանակը: Դուք անհանգստություն չունե՞ք Ադրբեջանի կողմից դարաբաղյան անջատողականների դեմ հակաահաբեկչական գործողություններից:

- Շատ հարցը մի քիչ չար է: Կարծում եմ, եւ Ադրբեջանի, եւ Հայաստանի, եւ Հարավային Կովկասի բոլոր երկրների համար ամենագլխավորը հասկանալն է, որ գերագույն նպատակն է՝ շահել խաղաղությունը: Կյանքը ոչ մեկ անգամ է ցույց տվել, որ յուրաքանչյուր թշնամություն մեր տարածաշրջանում՝ լինի դա ճակատամարտ, պատերազմ, թե ուղղակի սառը դիմակայություն, ոչ ոքի օգուտ չի բերում: Դուք, որպես Ադրբեջանի բնակիչ, հավանաբար նույնպես դա զգում եք: Մեր տարածաշրջանը կարող է բարգավաճել, եթե այստեղ հաստատվի ամուր խաղաղություն եւ կայունություն, հենց դրան են ուղղված Հայաստանի ղեկավարության ջանքերը:

Ինչ վերաբերում է ռեսուրսներին, ապա Դուք կարող եք փաստերով համոզվել, որ Հայաստանի տնտեսությունը զարգանում է ոչ պակաս արագ տեմպերով, քան Ադրբեջանինը: Ի դեպ, քաղաքականության մեջ նավթային ռոմանտիզմը շատերին է հուսախա

ԿՐՈՆ

Գրող Քեն Քիզին «Թռիչք կկվի բնի վրայով» նշանավոր վեպի հեղինակը, որ ժամանակին ամերիկյան արդարադատությունից թաքնվում էր Մեխիկայում՝ ադրիհնի թմրադեղ պահելու մեղադրանքով, իր հարկադիր աղաստանն անվանել է «առնետների պարապուս»: Այնինչ Լուիս Բունյուելի շնորհիվ «առնետների այդ պարապուսը» մեծ կինոհրապարակի համբավ ձեռք բերեց: Հեսպաստերազմյան տարիներից ի վեր հաստատվելով Մեխիկայում, մեծ հաստատվելով Մեխիկայում, մեծ հասանացին երկու տասնյակից ավելի ֆիլմեր նկարեց այնտեղ, «Մոռացվածների», «Նազարինի», «Կործանիչ հրեշակի» պես բացառիկ գործեր, որոնք այսօր կինոարվեստի դասական նմուշներ են: Բունյուելի ավանդները ժառանգեց նրա երբեմն օգնականը՝ վարպետի ձեռով մկրտված Արթուր Ռիպշտեյնը: Վերջին տասնամյակներում հենց Ռիպշտեյնն էր վայելում մեխիկական կինոյին բաժին ընկած դափնիները: Նրա հեղինակությունը սասանվեց 1992-ին, երբ նախկին դերասան Ալֆոնսո Արաուն ասպարեզ բերեց «Կրից այրվածները» մարկեսյան «մոգական ռեալիզմից» ներշնչված իր տիկնոջ Լաուրա Էսկիբելի «Ինչպես ջուրը շոկոլադի համար» վեպի էկրանացումը: Ռոմանտիկ սիրո այս լեգենդը տասնյակ մրցանակներ շահեց, իսկ ֆիլմի ցուցադրությունից ստացված հասույթը Միացյալ Նահանգներում կազմեց 22 միլիոն դոլար, որն աննախադեպ արդյունք է մեխիկական կինոնկարի համար: Ի պատասխան Արթուր Ռիպշտեյնը հրապարակ հանեց իր «Բոսորագույնը» սեւ հումորով շաղախված մի սրակեղեծ ոռմանս: Նա մարտահրավեր էր նետել իր հանդգնագույն հերոսների այդ գեղեցիկ հոգիների արյունոտ ու պաթոլոգիկ սիրավեպը բարձրացնելով շեքսպիրյան «Մակբեթին» վայել մակարդակի: Մեխիկական Բոնիի եւ Քլայդի այս պատմությունը եւս բազմաթիվ մրցանակների արժանացավ՝ հավաստելով, որ Ռիպշտեյնը մնում է իր երկրի գլխավոր կինոդեմը: Բայց կյանքի վեցերորդ տասնամյակը ոչ դրած ռեժիսորից այսուհետ ավելի շատ ջանքեր կպահանջվեն այդ տիտղոսը պահպանելու համար:

Անցյալ տարի Կաննի փառատոնում, Ռիպշտեյնի հետ մեկտեղ, Մեքսիկան էր ներկայացնում եւ նրա կրտսեր գործընկերը՝ 37-ամյա Ալեխանդրո Գոնսալես Ինյարիտուն: Այս անհայտ ու դժվարամարս անունը ոչինչ չէր ասում: Նույնիսկ փառատոնի կատալոգում ոչ մի տող չկար սկսնակ ռեժիսորի մասին, որը երկար ժամանակ Մեխիկոյի ռադիոկայաններից մեկի հանրաճանաչ դիցեյն է եղել: Բայց «Սերը շուն է» ֆիլմը Ինյարիտուի առաջին աշխատանքը, Կաննում երեք մրցանակ նվաճեց, իսկ Արթուր Ռիպշտեյնին ոչինչ բաժին չընկավ: Այս տարի ֆիլմը հավակնում էր նաեւ Ամերիկյան կինոակադեմիայի մրցանակին՝ որպես լավագույն արտասահմանյան կինոնկար: Թեեւ Ինյարիտուն «Օսկար» չստացավ, նրա ֆիլմը Տոկիոյում, Սան Պաուլուում, Գենտում, Էդինբուրգում, Չիկագոյում եւ այլուր այնպես է հեղեղվել մրցանակներով, որ դարձել է վերջին շրջանի փառատոնային ամենամեծ «հիթերից» մեկը: Դեռ երեկ անծանոթ նորելուկ ռեժիսորն այսօր հանրահայտ անուն է կինոաշխարհում:

«Սերը շուն է» ֆիլմի մտահղացումը մեկնաբանելիս Ինյարիտուն չի թաքցնում, որ փորձել է «հանդիսատեսին ստիպել ի դեմս ֆիլմի գործող անձանց ճանաչելու իրենց եւ դրանից ամաչելու»: «Իմ հերոսները,- նշում է նա,- մոռանում են իրենց ասվածային ծագման մասին, ողջ մնալու, աղրելու համար վերածվում կենդանիների»: Կինոնկարի երեք մասերն էլ հղումներ են ասվածաշնչյան պատվիրաններին, որոնք Ինյարիտուի հերոսները ոտնահարում են: Առաջին նովելում, որի միջավայրը Մեխիկոյի աղքատ թաղամասերն են, պատանի Օկտավիոն սիրահարված է եղբոր կնոջը եւ երազելով փախչել նրա հետ, փող է վաստակում ընդհատակյա շնակռիվներում: Արյունալի մարտերում շներն իրար են բզկտում, բայց մարդիկ էլ նույն կերպ իրենց բնազդների գերին են: Երկրորդ նովելը ծավալվում է գովազդի եւ դիզայնի սնդուսափայլ աշխարհում:

Հաջողակ դիզայներ Դանիելը լքում է ընտանիքը, բայց նրա սիրավեպը մանեքենուհի Վալերիայի հետ վերակերտվում է նույնպիսի գզվռոցի: Երրորդ նովելը ի մի է բերում կյանքի հատակն ու բիզնեսի ոլորտը եւ հավասարության նշան դնում այս ծայրաբեւեռների միջեւ: Ամեն ինչ նույնն է: Ավելին, երեք պատմությունների շարժիչ ուժն ու խորհրդանիշն էլ շներն են: Ինյարիտուն նորովի է իմաստավորել «մարդ եւ շուն» վաղեմի համեմատությունը՝ առանց փղձկոցի կամ լատինաամերիկյան հուզառատության հիշեցնելով մեզ, թե ինչ սենտիմենտալ ենք ու դաժան: Այդպես Կարրասկոն էր Սերվանտեսի անմահ վեպում հայելի պահում անրջանքով տարված Դոն Կիխոտի դիմաց, մի հայելի, ուր տիտի նրա իրական դեմքը արտացոլվեր: «Սերը շուն է» ֆիլմը Կարրասկոյի հայելին է:

Կարրասկոյի հայելին

Արժե դիտել

12 սեպտեմբերի, 21:30 Արմեն-Ակոր

■«Տաքսիստը»-★★: Ռեժիսոր՝ Մարտին Սկորսեզե: Դերերում՝ Ռոբերտ Դե Նիրո, Սիբիլ Շեփարդ, Ջոդի Ֆոստեր, Հարվի Քայթլ: ԱՄՆ, 1976:

Ցայգաթիթեռի պես դեգերող «կեսգիշերային տաքսիստը» դժոխք իջած նյույորքցի Օրփեոսն է, որը փնտրում է Եվրիդիկեին՝ առանց հասկանալու, թե իր կյանքի կորուսյալ իմաստն է փնտրում: Այս խելահեղ փնտրտուքը Կաննում այնպիսի տպավորություն է գործել, որ ֆիլմին շնորհվել է փառատոնի գլխավոր մրցանակը:

13 սեպտեմբերի, 00:05 Պրոմեթեւս

■«Աղջիկը կամրջին»★★: Ռեժիսոր՝ Պատրիս Լեկոնտ: Դերերում՝ Դանիել Օթյոյ, Վանեսա Պարադի: Ֆրանսիա, 1999:

Զուտ ֆրանսիական փայլով ու նրբագեղությամբ դրոշմված սիրավեպ, որտեղ կիրքը, տենչանքը փոխակերպվում են կրկեսային ներկայացման:

13 սեպտեմբերի, 01:10 Հ1

■«Փայլ»★: Ռեժիսոր՝ Սիդ Հիֆս: Դերերում՝ Ջեֆրի Ռաշ, Արմին Մյուլեր-Շթալ, Լին Ռեդգրեյվ: ԱՄՆ, 1996:

Ոչ բոնակալ հոր պատճառով մանկուց ժառանգած բարդույթները, ոչ շիզոֆրենիա ախտորոշմամբ հոգեբուժարանում անցկացրած 15 տարիներն արգելք չեն դառնում, որպեսզի դրսեւորվի դաշնակահար Դեյվիդ Հելֆգոթի բացառիկ տաղանդը: Նրա դերակատարին ըստ արժանվույն «Օսկար» է շնորհվել:

14 սեպտեմբերի, 22:50 ՕՐՏ

■«Թիթեռնիկը»★: Ռեժիսոր՝ Ֆրեդերիկ Շաֆներ: Դերերում՝ Սթիվ Մաքուին, Դասթին Հոֆման: ԱՄՆ, 1973:

Ի դեմս հանիրավի դատապարտված բանտարկյալի, որը շարունակ տքնում է փախչել տաժանավայրից, գրգռվում է մարդու անկոտրում ոգին, բայց առանց պաթետիկայի:

14 սեպտեմբերի, 01:10 Հ1

■«Սեր եւ մահ»★★★: Ռեժիսոր՝ Վուդի Ալեն: Դերերում՝ Վ. Ալեն, Դայան Քիթոն, Հարոլդ Գուլդ, Օլգա Ժորժ-Պիկո: ԱՄՆ, 1975:

Ռուս դասական գրականության՝ Տոլստոյի, Դոստոեւսկու արձակի եւ 19-րդ դարի մշակույթի փայլուն պարոդիան:

15 սեպտեմբերի, 18:50 Հ1

■«Մոնպառնաս 19»★: Ռեժիսոր՝ Ժակ Բեկեր: Դերերում՝ Ժերար Ֆիլիպ, Անուկ Էմե, Լինո Վենտուրա, Լիլի Փալմեր: Ֆրանսիա, 1957:

Անցյալ դարի փարիզյան բոհեմի ամենատաղանդավոր նկարիչներից մեկի՝ Մոդիլյանիի ողբերգական կյանքի պատմությունը:

15 սեպտեմբերի, 19:50 ՕՐՏ

■«Հռոմեական արձակուրդ»★: Ռեժիսոր՝ Ուիլյամ Ուայլեր: Դերերում՝ Օդրի Հեփբըրն, Գրեգորի Փեք: ԱՄՆ, 1953:

Սենտիմենտալ հեքիաթ ժամանակակից արքայադստեր մասին, որի հմայիչ դերակատարուհին «Օսկարի» է արժանացել:

15 սեպտեմբերի, 00:05 ՊՐՏ

■«Հարցազրույց վամպիրի հետ»★★: Ռեժիսոր՝ Նիլ Ջորդան: Դերերում՝ Թոմ Քրուզ, Բրեդ Փիթ, Քիրսթեն Դանսթ, Անտոնիո Բանդերաս: ԱՄՆ, 1994:

Հոլիվուդի ամենագեղեցիկ տղամարդիկ դարձել են աշխարհի ամենոռամանտիկ վամպիրները՝ հավիտենական տառապանքի դատապարտված էակներ:

16 սեպտեմբերի, 14:15 Հ1

■«Սոլյարիս»★★★: Ռեժիսոր՝ Անդրեյ Տարկովսկի: Դերերում՝ Դոնատաս Բանիոնիս, Նատալյա Բոնդարչուկ, Յուրի Յարվետ, Անատոլի Սոլոնիցին: ԽՍՀՄ, 1972:

Լեհ ֆանտաստ Ստանիսլավ Լեմի հորինած Սոլյարիս մոլորակում նյութականանում են ենթագիտակցական իղձերը: Այս դաժան փորձությունը մղձավանջ է դառնում տիեզերանավում օթեւանած երկրաբնակների համար:

16 սեպտեմբերի, 22:00 Պրոմեթեւս

■«Շոկոլադ»★: Ռեժիսոր՝ Լասե Հալստրյոմ: Դերերում՝ Ժյուլիետ Բինոշ, Ալֆրեդ Մոլինա, Ջոնի Դեփ, Ջուդի Դենչ: ԱՄՆ, 2000:

Հրուշակային մելոդրամ, որի «քաղցր» հերոսուհին շոկոլադի իր ճոխ տեսականիով արգելված հաճույքների, ազատության շունչն է բերում ֆրանսիական խստակյաց գավառ:

16 սեպտեմբերի, 23:30 Հ1

■«Սպիավոր դեմքը»★: Ռեժիսոր՝ Բրայան Դե Պալմա: Դերերում՝ Ալ Պաչինո, Սթիվն Բաուեր, Միշել Փֆայֆեր: ԱՄՆ, 1983:

Կուբացի վտարանդին Մ. Նահանգներում ընդհատակյա թմրաբիզնեսի արքա է դառնում, իսկ իրականում՝ հենց իր իշխանության զոհը:

16 սեպտեմբերի, 01:45 NTV

■«Հռոմ»★★★: Ռեժիսոր՝ Ֆեդերիկո Ֆելլինի: Դերերում՝ Փիթեր Գոնսալես, Բրիթա Բարնս, Պիա Դե Դոգես, Ֆ. Ֆելլինի: Իտալիա-Ֆրանսիա, 1972:

«Հավերժական քաղաքի» դիմանկարը, ինչպես երազի կամ ցնորքի մեջ, հյուսվել է իրական հուշերից, հին ու նոր տպավորություններից եւ խենթ անուրջներից:

Տարզանի պատմությունը

Եթե 20-րդ դարն իր դիցաբանությունն ունի, ապա Տարզանը, անկասկած, այդ դիցաբանության ամենահռչակավոր դեմքերից մեկն է: Նրա գլխապտույտ արկածների ողիսականը կազմում է շուրջ 30 գրքից հյուսված մի ամբողջ վիպաշար, իսկ դրա հիման վրա ստեղծվել են անհամար կոմիքսներ, ավելի քան 70 ֆիլմ եւ հեռուստասերիալ, ռադիոբեմադրություններ եւ թատերական ներկայացումներ: Նույնիսկ Լոս Անջելեսի արվարձաններից մեկն է կոչվում Տարզանի անվամբ:

Ոմանք անբախույց հեգնանքով նկատել են, թե լեգենդար մարդ-կապիկը, որի անունը գորիլաների լեզվով նշանակում է «սպիտակ մաշկ», դարձել է ամերիկացիների ազգային հերոսը: Մյուսները համոզված են, թե «Տարզանն այնքան փայլուն կերպար է, որ նոր սերունդներին եւս անհրաժեշտ է նրա հետ ծանոթացնել»:

Ինչեւէ, «կապիկների տիրակալին» փառաբանող վերջին կինոնկարն ասպարեզ եկավ 1998-ին՝ նրա 85-ամյա հոբելյանի շեմին (տարզանապատումի առաջին վեպը լույս է տեսել 1914-ին): Մինչդեռ Տարզանն ավելի «ծեր» է եւ մյուս տարի կբոլորի իր 90-ամյակը:

Նրա ծննդյան ստույգ տարեթիվը 1912-ի հոկտեմբերն է, երբ Չիկագոյում հրատարակվող «Ամեն կարգի պատմություններ» հանրամատչելի հանդեսում ոմն էդգար Ռայս Բերոուզ սկսեց շարունակաբար տպագրել «Կապիկների ցեղակից Տարզանը» վեպը: 37-ամյա Բերոուզը՝ այդ անհաջողակ ոսկեխույզը, ինքն էլ պատկերացում չուներ, թե այս անգամ ինչ ոսկեբեր երակ է հայտնագործել:

Նա արդեն հոգնել էր աշխատանքի մշտական փնտրտուքից: Ճիշտ է, ուսանել էր Միչիգանի ռազմական ակադեմիայում, բայց ծախողել էր զինվորականի իր կարիերան եւ ստիպված հազար ու մի զբաղմունք փոխել, ոչ միայն ոսկեխույզ էր եղել, այլեւ ոստիկան, կովբոյ, երկաթուղային, մատիտի սրիչներ վաճառող, լրահաղորդ եւ այլն: Ի վերջո, հաղթեց Բերոուզի հոգում աղրող գրամոլը, որը երազում էր բեսթսելերի մասին, մանավանդ երբ մարսեցիների մասին պատմող նրա պատմվածքն անսպասելիորեն հաջողություն ունեցավ: Մի քանի համանման գրվածքներից հետո Բերոուզը հասկացավ, թե որն է իրեն շարունակ տանջող ֆինանսական ճգնաժամի ելքը եւ կրկնապատկված եռանդով գործի անցավ: Նոր տիրույթների հետամուտ կոնկիստադորի խիզախությամբ նա որոշեց Մարս մոլորակից վայրէջ կատարել աֆրիկյան մայրցամաքում: Եթե որեւէ մեկի մտով անցներ նորաքուխ վիպասանին հիշեցնել, թե ինչպես պիտի գրի Աֆրիկայի մասին, որտեղ երբեք ոտք չի դրել, Բերոուզը կարող էր ընդդիմախոսին այն հիմնավոր փաստարկով ջախջախել, որ երբեւէ Մարս էլ չի այցելել: Մի խոսքով, նման «մանրուքները» չէին շփոթեցնում նրան: Կարեւորը մտահղացումն էր: Միայն թե Բերոուզը ստեղծագործական տվայտանքներով տապակվելու ժամանակ չուներ, դրա համար էլ առանց այլեւայլության յուրացրեց Քիփլինգի հանրահայտ հերոսին: Տարզանը, ըստ էության, ջունգլիում հասակ առած Մաուգլին է: Բայց «Կապիկների ցեղակից Տարզանը» վեպում Բերոուզը բնավ էլ հանձն չէր առել ակնառու օրինակով լուսաբանել Դարվինի տեսությունը մեր նվաստ ծագման մասին: Անգամ «կապիկների տիրակալի» համար ազնվազարմ ծագումը պարտադիր պայման էր: Այն տարիների «միջին ամերիկացու» պատկերացմամբ կատարելության չափանիշը բրիտանական արիստոկրատիան էր, ուստի Բերոուզն իր վայրենի հերոսին դարձրել էր անգլիացի լորդ Գրեյսթոքի կորուսյալ որդին: Վեպը լի էր անհավանական իրադրություններով, չափազանցված ատրումներով ու մելոդրամատիկ կրքերով, թեեւ այդ ամենի կողքին հիշատակության արժանի են նաեւ աշխույժ շարադրանքը, գունեղ նկարագրություններն ու հումորը:



Չնայած բազմաբիվ թերություններին, իսկ գուցեեւ դրանց շնորհիվ, Բերոուզի առաջնեկը խանդավառությամբ ընդունվեց ռոմանտիկ հերոսների եւ արկածային գրականության ծարավ ընթերցողների շրջանում: Այդ խանդավառությունն այնպես ոգեշնչեց Բերոուզի հոգում արթնացած գրամոլին, որ այլեւս ոչ մի ուժ աշխարհում ի զորու չէր նրան կասեցնել: 1913-ին մամուլում տպագրվեց «Տարզանի վերադարձը», որից հետո անվերջ վերադառնալու սովորույթը դարձավ Բերոուզի հերոսի այցեքարտը: Նա վերադարձավ գրական աշխարհ նույնիսկ իր «կնքահոր» մահից 14 տարի անց՝ 1964-ին, երբ լույս ընծայվեց նախկինում չհրատարակված «Տարզանը եւ խենթը»: Այս վեպի շնորհիվ էր, որ նորովի բռնկվեց հետաքրքրությունը Բերոուզի հանդեպ, եւ նրա հին գործերը սկսեցին վերահրատարակվել: Կենդանության օրոք ծեռներեց գրողն ինքն էր հոգ տանում այդ հետաքրքրությունը բորբոքելու մասին: Դեռ 10-ական թթ. նկարիչներ Սենք Ջոնի, Ուայթի եւ Հոգարթի աջակցությամբ Բերոուզը սկսեց իր վիպաշարը պատկերազարդ թերթերի տեսքով մաս առ մաս տպագրել Չիկագոյի խոշոր լրագրերի կիրակնօրյա հավելվածներում: Տարզանն իր համբավի համար, առաջին հերթին, պարտական էր ներկայիս կոմիքսների այդ նախօրինակներին: Նրա համբավն այնքան լայնատարած էր, վիթխարի, որ, վերջ ի վերջո, ժրաջան վիպասանը հայտնվեց իր հերոսի սվերում: Բայց ամերիկացի Բերոուզը չէր տառապում դրա համար, նա ինտելեկտուալ բարդույթներ չուներ, ինչպես նրբազգաց անգլիացի Արթուր Քոնան Դոյլը, որին հանրածանոթ Շերլոք Հոլմսը հետզհետե ավելի մեծ ուրտնեղություն էր պատճառում: Տարզանը լիովին վարձահատույց էր եղել իր հեղինակին՝ ճանաչման հետ մեկտեղ պատկառելի կարողություն բերելով նրան: Բերոուզը բնակություն էր հաստատել Լոս Անջելեսի Տարզան արվարձանի հարեւանությամբ, իր հսկայական կալվածքում, որը նույնպես ի պատիվ Տարզանի՝ կոչվում է նրա անվամբ: Փորձիկ քաղաքի նմանվող այդ կալվածքի այժմյան տերը գրողի թոռն է:

Էջը պատրաստեց՝
ՀԱՎԵՆ ԲՈՅԱՋՅԱՆԸ

Սերգո Չախոյանի համաշխարհային ռեկորդը



Ավստրալիայի Բրիսբեն քաղաքում ընթացող Բարի կամքի խաղերում գերազանց ելույթ ունեցավ հայ ծանրորդ Սերգո Չախոյանը՝ սահմանելով համաշխարհային նոր ռեկորդ: Ավստրալիան ներկայացնող մեր դյուցազնը 85 կգ քաշային կարգում մոկում վարժությունում բարձրացնելով 181,5 կգ-անոց ծանրածողը, կես կգ-ով գերազանցեց վաց ծանրորդ Գեորգի Ասանիձեի նախկին ռեկորդը: Չախոյանի ցուցանիշը լավագույնն էր նաեւ հրում վարժությունում (210 կգ): Երկամարտի 390 կգ արդյունքով Սերգո Չախոյանը դարձավ Բարի կամքի խաղերի հաղթող՝ ոսկե մեդալ պարգեւելով Ավստրալիայի հավաքականին:

Հետաքրքիր է, որ ծանրորդների մրցավեճին մասնակցում էր նաեւ Գեորգի Ասանիձեն, որը մոկում վարժությունում հաղթողին զիջեց 11,5 կգ-ով՝ արժանանալով արծաթե մեդալի: Բրոնզը բաժին հասավ բուլղարացի Միլեն Դոբրեւին (167,5 կգ):

Հայ մարզասերներն, անշուշտ, լավ են ճանաչում Սերգո Չախոյանին, որը ժամանակին Հայաստանի հավաքականի կազմում մասնակցել է միջազգային ամենաբարձր կարգի մրցումներին, դարձել մրցանակակիր: 1979 թ. Սերգո Չախոյանն էլ մեր մարզիկներից շատերի նման մեկնեց Հայաստանից՝ բնակություն հաստատելով Ավստրալիայում: Այնուհանդերձ շատ ուրախալի է, որ այսօր էլ հայ ծանրորդը, թեկուզ եւ այլ պետության դրոշի ներքո, լավ մարզավիճակում է եւ շարունակում է գրոհել համաշխարհային ռեկորդները: Այնպես որ հայկական ծանրամարտի լավագույն ավանդույթները շարունակողներ կան նաեւ օտար ափերում:

Ուղեգրերի համար պայքարը դեռ առջեւում է

2002 թ. Ճապոնիայում եւ Կորեայում կայանալիք ֆուտբոլի աշխարհի առաջնության ուղեգրերի համար թեժ մրցակցություն է ծավալվել տարբեր գոտիների ընտրական մրցաշարերում: Եթե եվրոպական գոտու ընտրական մրցաշարի ավարտին մնացել է ընդամենը մեկ տուր եւ արդեն հայտնի են խաղարկվող14 ուղեգրերից 3-ի տերը (Լեհաստան, Իսպանիա, Շվեդիա), ապա Հարավային Ամերիկայի եւ ԿՈՆԿԱԿԱՖ-ի ընտրական մրցաշարարերում հիմնական պայքարը դեռ առջեւում է, չնայած արդեն հայտնի են եզրափակիչի մեկական մասնակիցներ (Արգենտինա, Կոստա Ռիկա):

Չիլավերտի հերթական գոլը

Հարավային Ամերիկայի գոտու ընտրական մրցաշարի հերթական տուրում բոլորի ուշադրության կենտրոնում հարավամերիկյան ֆուտբոլի երկու հսկաների՝ Արգենտինայի եւ Բրազիլիայի հավաքականների Բուենոս Այրեսում կայացած մրցախաղն էր: Չնայած արգենտինացիները վաղուց արդեն նվաճել էին եզրափակիչի ուղեգիրը, բայց խաղը նրանց համար սկզբունքային նշանակություն ուներ: 60 հազար հանդիսականներ ակնատես եղան լարված ու դրամատիկ պայքարի: Արդեն 2-րդ րոպեին Այալան անզգուշորեն գնդակն ուղարկեց սեփական դարպասը՝ առաջ մղելով բրազիլացիներին: Ընդմիջումից հետո խաղադաշտ դուրս եկած Օրտեգան եւ Գալլարդոն զգալիորեն ուժեղացրին արգենտինացիների հարձակողական ներուժը: Վերջինս էլ 78-րդ րոպեին հավասարեցրեց հաշիվը: Իսկ խաղավերջից 5 րոպե առաջ այս անգամ արդեն բրազիլացի Կրիսը գնդակն ուղարկեց սեփական դարպասը: Այս պարտությունը զգալիորեն վատթարացրեց բրազիլացիների մրցաշարային վիճակը, մանավանդ որ նախորեին Ուրուգվայի հավաքականը հյուրընկալվելիս 2-0 հաշվով հաղթել էր Պերուի ընտրանուն:

Իրենց երկրպագուներին հաճելի անակնկալ մատուցեցին պարագվայցիները՝ խոշոր հաշվով (5-1) պարտության մատնելով Բոլիվիայի հավաքականին: Այդ խաղում կրկին աչքի ընկավ պարագվայցիների հանրահայտ դարպասապահ Խոսե Լուիս Չիլավերտը, որը 48-րդ րոպեին տուգանային հարվածով իր հերթական գոլը խփեց:

Կոլումբիա-Էկվադոր խաղում հաշիվն այդպես էլ չբացվեց: Չիլի-Վենեսուելա հանդիպումն ավարտվեց հյուրերի հաղթանակով (2-0):

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Արգենտինա	15	12	2	1	37-12	38
2. Պարագվայ	15	9	2	4	26-14	29
3. Էկվադոր	15	8	2	5	17-18	26
4. Բրազիլիա	15	7	3	5	25-14	24
5. Ուրուգվայ	15	7	3	5	16-10	24
6. Կոլումբի	15	5	5	5	12-13	20
7. Պերու	15	4	3	8	13-19	15
8. Բոլիվիա	15	3	5	7	16-26	14
9. Չիլի	15	3	2	10	14-22	11
10. Վենեսուել	15	3	1	11	12-40	10

Երկրորդ անգամ եզրափակիչում

ԿՈՆԿԱԿԱՖ-ի գոտում խաղարկվում է 3 ուղեգիր: Ընտրական մրցաշարի 8-րդ տուրն անվանեց եզրափակչի առաջին մասնակցին: Դա Կոստա Ռիկայի հավաքականն է, որը սեփական հարկի տակ չափազանց կարեւոր հաղթանակ տոնեց ԱՄՆ ֆուտբոլիստների նկատմամբ (2-0): Հարկ է նշել, որ Կոստա Ռիկան սեփական դաշտում միշտ էլ հաջող է խաղացել ամերիկացիների հետ, որոնց կազմում այս անգամ բացակայում էին Կլինտ Մատիսը, Կլաուդիո Ռեյնան եւ Ջորջ Վոլֆը:

Կոստա Ռիկայի հավաքականն իր պատմության մեջ 2-րդ անգամ է իրավունք նվաճում հանդես գալու աշխարհի առաջնության եզրափակիչ փուլում: 1990 թ. հանրահայտ հարավսլավացի մարզիչ Բորա Միլուտինովիչի գլխավորությամբ Կոստա Ռիկայի հավաքականը Իտալիայում կայացած աշխարհի առաջնությունում հասել էր մինչեւ 1/8 եզրափակիչ: Մյուս 2 ուղեգրերի համար պայքարը զգալիորեն սրվեց այն բանից հետո, երբ մեքսիկացիները սեփական հարկի տակ 3-0 հաշվով հաղթեցին Տրինիդադ եւ Տոբագոյի ընտրանուն, իսկ Հոնդուրասի հավաքականը պարտության մատնեց Ջամայկայի ֆուտբոլիստներին 1-0 հաշվով:

Մնացած հանդիպումների խաղացանկն այսպիսին է.

7.10 Հոնդուրաս-Տրինիդադ եւ Տոբագո, Կոստա Ռիկա-Մեքսիկա, ԱՄՆ-Ճամայկա, 11.11. Մեքսիկա-Հոնդուրաս, Ջամայկա-Կոստա Ռիկա, Տրինիդադ եւ Տոբագո-ԱՄՆ:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1.Կոստա Ռիկա	8	6	1	1	16-7	19
2.Հոնդուրաս	8	4	2	2	17-13	14
3.Մեքսիկա	8	4	1	3	13-9	13
4.ԱՄՆ	8	4	1	3	9-7	13
5.Ճամայկա	8	2	2	4	6-11	8
6.Տրինիդադ	8	0	1	7	4-18	1

ԹԱՆՐԱՄԱՐՏ

Գեորգ Ալեքսանյանը Եվրոպայի չեմպիոն

Շվեդիայում ընթացող ծանրամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնությունում գերազանց են հանդես գալիս հայ ծանրորդները, որոնք թիմային հաշվարկով առայժմ ընթանում են առջեւից: Գովասանքի է արժանի հատկապես 77 կգ քաշային ծանրորդ Գեորգ Ալեքսանյանը, որը երկու վարժություններում էլ ցույց տալով լավագույն արդյունքը, երկամարտի 345 կգ արդյունքով հռչակվեց Եվրոպայի երիտասարդների չեմպիոն: Գեորգը պոկեց 155 կգ-անոց ծանրածողը, հրում վարժությունում սահմանեց Եվրոպայի երիտասարդների նոր ռեկորդ (190 կգ): Երկամարտում նրա արդյունքը եւս գերազանցում էր մայրցամաքի նախկին ռեկորդը: Իրոք որ Գեորգ Ալեքսանյանը փայլուն ելույթ ունեցավ: Քաշային նույն կարգում մեր մյուս ծանրորդը՝ Տիգրան Մարտիրոսյանը երկամարտի 337,5 կգ արդյունքով արժանացավ բրոնզե մեդալի:

Իսկ մինչ այդ Հայաստանի պատվիրակությանը մեդալներ էին պարգեւել Մակար Թամրազյանը (56 կգ) եւ Արթուր Դանիելյանը (62 կգ): Մակարը երկամարտի 232,5 (102,5+130) կգ արդյունքով արժանացավ արծաթե մեդալի՝ բրոնզե եւ արծաթե մեդալներ նվաճելով նաեւ առանձին վարժություններում: Նրա արդյունքը նույնությամբ կրկնեց նաեւ Արթուր Դանիելյանը, որը երկամարտում ցույց տվեց 280 (122,5+157,5) կգ արդյունք: 62 կգ քաշային կարգում մեր 2-րդ ներկայացուցիչը՝ Արսյոմ Մկրտչյանը, գրավեց 4-րդ տեղը՝ 272,5 (122,5+150) կգ:

Երեկ, ուշ երեկոյան սկսվեց 85 կգ քաշային ծանրորդների մրցավեճը: Հայաստանից մրցահարթակ ելան Տիգրան Քամալյանը:

ՇԱԽՄԱՏ

Լավագույնը Դարբինյան քույրերի արդյունքն է

Հունաստանի Հալկիդիկի բնակավայրում շարունակվում է 10-18 տարեկան աղջիկների եւ պատանիների շախմատի Եվրոպայի առաջնությունը, որտեղ արդեն կայացել է 6 տուր: Հայաստանը ներկայացնող 8 շախմատիստներից առավել հաջող են հանդես գալիս Դարբինյան քույրերը: Մինչեւ 12 տարեկան աղջիկների մրցաշարում Նունե Դարբինյանը հաղթելով Դարյա Խառոշկինային, վաստակել է 4,5 միավոր: Այստեղ առաջատարը ռումինուհի Ժոզեֆինա Պաուլեսն է (5,5 միավոր): Մինչեւ 14 տարեկանների մրցաշարի մասնակից Անի Դարբինյանը եւս հաղթանակ տոնեց մրցակցուհու՝ Քրիստինա Հերենկովայի նկատմամբ եւ իր օգտին ունի 4,5 միավոր: Նա ընդամենը կես միավորով է զիջում առաջատարներին՝ Կատերինա Լախնոյին (Ուկրաինա), Դորոտա Չառնոտային (Լեհաստան) եւ Ավթայ Իզմայլովային (Ադրբեջան):

Մինչեւ 10 տարեկանների մրցաշարերի մեր երկու մասնակիցներն էլ՝ Լուսինե Կարապետյանն ու Արթուր Պետրոսյանը վաստակել են 3-ական միավոր: Սակայն եթե Արթուրը 6-րդ տուրում հաղթեց, ապա Լուսինեն պարտվեց: Տարիքային այս խմբում պատանիներից առաջատարը ռուսաստանցի Մախիմ Մաշլակովն է (5,5 միավոր): Աղջիկներից առայժմ առանց միավորի կորուստի է ընթանում բելառուսցի Ալյոնա Թահիրովան:

Մինչեւ 12 տարեկան պատանիների մրցաշարում Գեորգ Ալավերդյանը պարտվեց Թուլայ Բեռկաուին եւ այժմ ունի ընդամենը 2 միավոր: Իսկ աղյուսակը գլխավորում են լատվիացի Յուրլուս Միխայլովսը եւ ռուսաստանցի Յան Նեպոմնյաշչին (5,5-ական միավոր): Տարիքային հաջորդ խմբում առաջատարը հարավսլավացի Բորկի Պրեդուեիչն է՝ 5,5 միավոր:

Մինչեւ 16 տարեկանների մրցավեճում Սիրանույշ Անդրեասյանն ունի 2 միավոր, Լեւոն Բաբուջյանը՝ 3,5: Այստեղ պատանիներից լավագույն ցուցանիշն ունի ադրբեջանցի Նիդյաս Մամեդովը (5,5 միավոր), աղջիկներից՝ Մարիա Գուսեւան (Ռուսաստան) եւ Նատալյա Զդեբսկայան (Ուկրաինա)՝ 5-ական միավոր: Մինչեւ 18 տարեկան աղջիկների մրցաշարում Ալլա Սահակյանը վաստակել է 3 միավոր: Առաջատարը Ինգա Չարխալաշվիլին է՝ 5,5 միավոր: Վրաց շախմատիստ Զվիադ Իզորիան 5,5 միավորով գլխավորում է պատանիների մրցաշարային աղյուսակը:

Մրցաշարում երկիրխանություն է

Արգենտինայում ընթացող Միգել Նայդորֆի 12-րդ հուշամրցաշարում խաղացվել է 3 տուր: 2,5-ական միավորով՝ աղյուսակը գլխավորում են 14-ամյա Ռաֆաբովը եւ հունգարուհի Հյուդիթ Պոլգարը: Երկուսն էլ վերջին երկու տուրերում հաղթանակներ տոնեցին: Ռաֆաբովը հաղթեց Ռիկարդիին եւ Միլոշին, Պոլգարն առավելության հասավ Միլոշի եւ Շորթի նկատմամբ: Մեկնարկում առաջատարի դերը ստանձնած Կարպովը ոչ-ոքի խաղաց Շորթի եւ Թելգաեւի հետ: Նա այժմ Կորչնոյի հետ վաստակել է 2 միավոր: 1,5-ական միավորով հաջորդ տեղերում են Սե Ցզյուն եւ Մեկինգը: Վերջինս 3-րդ տուրում խաղաղ դաշն կնքեց Կորչնոյի հետ:

Ատարեցում ամերիկուհիներն են

Նյու Յորքում հայտնի դարձավ թենիսի կանանց մրցաշարի կիսաեզրափակիչի մյուս զույգը: Միմյանց հետ կմրցեն Վինուս Ուիլյամսն ու Ջենիֆեր Կապրիատին: Ուիլյամսը հաղթեց Կիմ Կլեյստերսին (6-3, 6-1), Կապրիատին պարտության մատնեց Մորեսմոյին (6-3, 6-4):

Տղամարդկանց մրցաշարում լարված պայքարում անցավ Սամփրասի եւ Աղասու մրցախաղը: 3,5 ժամ տեւած հանդիպումը շահեց Սամփրասը: Կիսաեզրափակիչում նրա մրցակիցը կլինի Սաֆինը, որն առավելության էր հասել Սաբալենայի նկատմամբ:

Կիսաեզրափակիչ մտավ նաեւ Եվգենի Կաֆելնիկովը: Նրա մրցակիցը Գուստավո Կուերտենն էր: Կաֆելնիկովը գերազանց անցկացրեց ողջ հանդիպումը՝ մրցակցին հաղթանակի հասնելու ոչ մի հույս չթողնելով: Բոլոր երեք խաղափուլերում էլ նրա առավելությունն ակնհայտ էր (6-4, 6-0, 6-3): Եզրափակիչի ուղեգիրը Կաֆելնիկովը կվիճարկի ավստրալացի Լլեյթոն Հյուիթի հետ մրցավեճում: Վերջինիս հաջողվեց 5 խաղափուլում հաղթահարել ամերիկյան թենիսի հայտնություն դարձած Էնդի Ռոդիկի դիմադրությունը:

Էջը պատրաստեց
ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

ԴԱՍ

Հունանյանը պնդում է, որ հոկտեմբերի 27-ին որևէ մեկին սպանելու մտադրություն չի ունեցել

«Հոկտեմբերի 27»-ի դատավարության երեկվա նիստում Նաիրի Հունանյանն, ի թիվս այլ տեղեկությունների, հայտնեց նաեւ, թե ողբերգության օրը Ազգ-ում որեւէ մեկին սպանելու մտադրություն չի ունեցել: Այս «ծեծված» ցուցմունքին նա այնուամենայնիվ շարունակում է հավատարիմ մնալ, թեպետ այդ օրվա իրադարձությունների տեսագրությունն ինքնին հերքում է նման պնդումը: Փաստաբան Արամ Կարախանյանի հարցին, թե ամբաստանյալը տեղյա՞կ էր, որ Վազգեն Սարգսյանը մշտապես շրջապատված է թիկնապահներով, եւ ինչպե՞ս էր պատրաստվում դիմադրել նրանց, Ն. Հունանյանը պատասխանեց. «Թիկնապահներից 4-5-ին տեսել էի: Գիտեի, որ նրանցից գոնե 1-ը մշտապես ուղեկցում է վարչապետին: Ըստ իմ նախնական ծրագրի՝ մեզանից 2-3-ը պիտի ստանձնեին նրանց զինաթափելու գործը՝ առանց կրակոցների, հնարավորինս անաղմուկ, որպեսզի դահլիճում այդ ամենը չիմացվեր: Ենթադրվում էր, թե թիկնապահներն, ամենայն հավանականությամբ, միջանցքում են գտնվելու...»:

Փաստաբանի համառ հարցադրումներին, որ ուղղված էին ճշգրտելու, թե Հունանյանը որքանո՞վ հստակ էր պատկերացնում իր անելիքն այդ օրը եւ ի՞նչ հրահանգներ էր տվել իր զինակիցներից յուրաքանչյուրին, ամբաստանյալը պատասխանում էր նույնը. «Հրահանգներ, որպես այդպիսի, չեն եղել, պարզապես խոսել ենք մեր անելիքի մասին: Երբ նման խնդիր ես նախապատրաստվում, երբեմն չես կարող վաղօրոք իմանալ՝ ինչն ինչպես կպատահի: Ես անվտանգության համակարգի աշխատակից չէի, որ ծայրահեղ իրավիճակներում կողմնորոշվելու եւ ճիշտ գործելու փորձ ունենայի: Առաջին անգամ էր, դրա համար էլ անհավատարակշիռ վիճակում էինք...»: Այդուհանդերձ, առաջին (եւ վերջին) անգամվա հանգամանքը հաշվի առնելով՝ Հունանյանը «վատ» չկողմնորոշվեց. բարեբախտաբար, նրա կենսափորձն այս առումով այլեւս աճ չի ապրի: Ինքը, սակայն, դիակների առկայությունը շարունակում է բացատրել իր անփորձ լինելու հանգամանքով:

«Եթե հստակ չէիք պատկերացնում ձեր գործողություններն այդ օրը Ազգ դահլիճում, ապա ի՞նչն եք կոչում «ծրագրին նախապատրաստվել», ինչո՞վ էիք զբաղված այդքան ժամանակ» հարցին Հունանյանը պատասխանեց, թե ինքն ավելորդ ժամանակ չուներ «մանրուքներին» տրամադրելու, եւ զբաղված էր բուն հեղաշրջումից հետո իրենց անելիքը որոշակիացնելով: Այս հայտարարությունն արժանացավ փաստաբանի մի դիտողությանը, թե՝ օրվա անելիքը (որի հաջողությունից էր կախված հետագա ողջ ծրագիրը) հստակ չիմացող Հունանյանն իր գործողությունների նախապատրաստական փուլում «տարօրինակորեն» ընդարձակ ժամանակ է հատկացրել անորոշ ապագային: Հունանյանին այս դիտողությունը կարծես թե փոքր-ինչ «նեղը» գցեց, որովհետեւ անմիջապես չկարողացավ հարմար պատասխան գտնել, ինչն, ի դեմ, նրան սովորաբար հաջողվում է՝ փաստաբանի դանդաղկոտության, թե սեփական «ճարտար» լեզվի շնորհիվ: Համենայն դեպս, ժամանակ առ ժամանակ նրա պատասխանները նույնիսկ կոմիտաս կամ ծաղրական են դառնում՝ նայած, թե ինչպիսին են հարցադրումները: «Ես իմ ցուցմունքներում նույն միտքը 3 անգամ կրկնել եմ, 30-ն էլ կկրկնեմ, բայց ի՞նչ օգուտ, եթե տեղ չի հասնում...», երեկ մի առիթով նա «դաս» տվեց փաստաբանին: Այս օրինակը միակը չէ:

Դատական նիստի հետագա ընթացքում ամբաստանյալն՝ «իմ ժողովուրդը» արտահայտությունը մշտապես շուրթերին, դատողություններ էր անում կոռուպցիայի, կուսակցությունների (մասնավորապես՝ ՀՅԴ-ի), տնտեսական բարգավաճման հեռանկարների, խաղաղության եւ շատ այլ բաների մասին: «Եթե կոռուպցիայի վերաբերյալ որոշակի այդման փաստեր գիտեիք, ինչո՞ւ չդիմեցիք իրավապահ մարմիններին՝ փոխանակ Ազգ ներխուժելու»,. հարցրեց փաստաբանը: «Ես զավեշտով չեմ զբաղվում...», հետեւեց պատասխանը: Հոկտեմբերի 27-ն այս պատասխանի իրեղեն վկայությունն էր, որն, իրոք, զավեշտ «ֆիչ» էր պարունակում: Տեսական բնույթի իր դատողություններում ամբաստանյալը չշրջանցեց նաեւ կուսակցությանը, որի անդամն է եղել անցյալում: Նրա խոսքերով՝ երբեմնի կուսակցական ընկերներն իրեն վերաբերվել են որպես սկզբունքային եւ ազնիվ մարդու: «Այդ դեպքում ինչո՞ւ չարտահայտեցին իրենց դժգոհությունը՝ ձեզ կուսակցության շարքերից հեռացնելու կապակցությամբ», փաստաբանի այս հարցին Հունանյանը պատասխանեց, թե դժգոհություններ հնչել են մասնավոր խոսակցություններում, իսկ իրեն առհասարակ հեռացրել են անհիմն: «Ես ծանր հուսախաբություն ապրեցի, քանի որ այդ կուսակցության մասին պատկերացումներս գրքերից «իջան» իրականություն», «անհիմն» հեռացվածի վիրավորանքով ասաց Հունանյանը:

Նրա մնացյալ ցուցմունքներն առնչվում էին 2 հեռախոսազանգերին, որ հասցեագրված էին Սամվել Բաբայանին՝ Ն. Հունանյանի պահանջով: Առաջին անգամ այդ հանձնարարությունը՝ Ս. Բաբայանին գտնելու, ստացել է Հայկ Բաբուխանյանը, երկրորդ անգամ Հունանյանը դիմել է ընդհանրապես ներկաներին: «Ուզում էի նրա հետ զրուցել հոկտեմբերի 27-ին ստեղծված իրավիճակի մասին», պարզաբանեց ամբաստանյալը:

ԼԵՌՆԻԿ ԲԱԲԱՅԱՆ

Հետաքննող լրագրողների ընկերակցություն

Դիմեք «Ինֆորմացիայի ազատության» կենտրոն, երբ պաշտոնյաները մերժում են ձեզ ինֆորմացիա տալ:
Հասցե՝ Երեւան, Դեղատան փող. 4, բն. 1 ա, հեռ. 524105, 529240
էլ. փոստ shushan@internews.am. versused@arminco.com

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 8-ին, ժամը 19:00-ին, «Արամ Խաչատրյան» համերգասրահում կկայանա
երգեհոնային երաժշտության երեկո
Հայաստանում միակ համերգով հանդես կգա անվանի երգեհոնահարուհի
Նարինե Սիմոնյանը (Ֆրանսիա)
Ծրագրում՝
հայ եւ արեւմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ

Սեպտեմբերի 9-ին, ժ. 19:00-ին,
«Արամ Խաչատրյան» համերգասրահում կկայանա
«Սերենադ» կամերային նվագախմբի համերգը
Գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր **Էդուարդ Թոփչյան**
Մենակատարներ **Մաթիաս Արթեր, հոբոյ (Շվեյցարիա)**
Թոբիաս Մոսքեր, թավջութակ (Գերմանիա)
Բորիս Պրեւիսիսկ, ֆլեյտա (Շվեյցարիա-Խորվաթիա)
Դիրիժոր՝ Լուիջի դի Բելլա (Իտալիա)
Ծրագրում՝ Ֆրանկ Մարտին, Իսանգ Յուն, Իգոր Ստրավինսկի

2000/2001 թթ. համերգաշրջանի հովանավոր
AGBU- Հայկական բարեգործական ընդհանուր միություն
Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել
560645 հեռախոսահամարով:

ՀՖԵՆ-Ի ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Carrier **Ձեր տան եղանակը - Ձեր ընտրությամբ**

"Carrier" ամերիկյան ֆիրմայի միակ
ներկայացուցիչ "Katam International" ընկերությունը
առաջարկում է Ձեզ տաքացնող/սառեցնող
կոնդիցիոներների եւ համակարգերի լայն ընտրություն



Տրվում է 2 տարվա երաշխիք

Այցելեք մեզ
Երեւան, Մոսկովյան 33
Հեռ. 53-02-42
E-mail:carrier@armenia.com

ԵՐԵ

Երեւանի քաղաքապետարանի
ՀՐԱՉՅԱ ՂԱՓԼԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
34-րդ թատերաշրջանի բացումը

Սեպտեմբերի 14-ին «Հիսուս Նազովրեցին եւ նրա երկրորդ աշակերտը», 15-ին «Կատակերգություն», 16-ին «Ռոմեո եւ Ջուլիետ», 22-ին, 23-ին, 30-ին նոր ներկայացում Վիլյամ Սարոյան «Իմ սիրտը լեռներում է», 26-ին «Սպանել սիրո համար», 27-ին «Բարեւ, սիրկաներ», 28-ին «Անվերջ վերադարձ», 29-ին «Ջան»:

Ներկայացումների սկիզբը ժ. 19-ին:
Տոմսերը վաճառվում են:

Հեռախոս 52-47-23:

Թատրոնի գեղարվեստական ղեկավար
ԱՐՄԵՆ ԽԱՆԴԻԿՅԱՆ

Հայտարարություն

Advanced Engineering Associates International կազմակերպությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (USAID) «Հայաստանի էներգոէֆեկտիվություն, Ղեկավարում սպառման կողմից եւ Վերականգնվող էներգիայի ծրագրի» շրջանակներում կազմակերպում է ջերմամատակարարման եւ էներգոէֆեկտիվության բարելավման ցուցադրական ծրագրեր: Բոլոր հետաքրքրված մասնավոր ESCO (էներգո ծառայության) կազմակերպությունները կարող են իրենց աշխատանքային փորձի մասին տեղեկությունները (գրանցումը Պետռեգիստրում, իրականացված ծրագրերը, ծրագրերի քանակը եւ ընդհանուր բնութագիրը) եւ հայտն ուղարկել Advanced Engineering Associates International կազմակերպության փոխտնօրեն Գուրգեն Մելիքյանի էլ. փոստի հասցեով՝

amaeai@arminco.com:

Վերջին ժամկետը՝ 10 սեպտեմբերի, 2001 թ.

CALIFORNIA PIZZA

Վայելեք որակյալ լցոնվի գարեջուր
ճաշատեսակներ
պիցցաներ
սենդվիչներ
աղցաններ



Գարձի որակ, հաճեի մթնոլորտ

Այցելեք ԱՐՈՎՅԱՆ 21 և կհամոզվեք
Առաքման համար՝
Հեռ: 543-100 և 586-395

@rminco
Global Telecommunications

ՆՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ինֆորմացիայի վերականգնում
- Համակարգչային սարքավորումների վերանորոգում

ՆՈՐ ԳՆԵՐ, ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՏԵՐՆԵՏ քարտի օգտագործում
20% ցածր գներով

- Գիշերայինը՝ ամսական $ 20
- Շուրջօրյան՝ ամսական $ 50
- Էլ. փոստը՝ ամսական $ 10

Հեռ.՝ 52-43-51, 52-63-26
E-mail: support@arminco.com
WEB: http://www.arminco.com

«ԱՐԻՏՈՍ»

տուրիստական գործակալությունը հոկտեմբերի 14-22-ը կազմակերպում է ուխտագնացություն դեպի Մշո Առաքելոց վանք, որտեղ թաղված են Մովսես Խորենացին, Դավիթ Անհաղթը, Ղազար Փարպեցին, եզնիկ Կողբացին: Ուխտագնացությունը նվիրվում է Թարգմանչաց տոնին:

Շրջագայության ընթացքում դուք կտեսնեք նաեւ Կարսը, Անին, Իգդիրը, Բայազետը, քրիստոնեության ընդունման վայր Բագավանը, Վանը, Աղթամար կղզին, Նեմրութ սարը, Բիթլիսը, Մուշը, Խնուսը, Էրզրումը, Ալաշկերտը, Սարիղամիշը, Արդահանը:

Սա իսկապես բացառիկ հնարավորություն է: Ձեր օրացույցի այս 8 օրը նվիրեք Ձեզ՝ ապահով շրջագայություն, անջնջելի տպավորություններ:

Շտապեք, Հայաստանի քաղաքացիների համար հայտերի ընդունման վերջին ժամկետը սեպտեմբերի 10-ն է:

Հասցեն «Անիտուր», Խորենացու 26, 2-րդ հարկ
Հեռ. 52-78-50, 55-75-03

ԱՐԻՏՈՍ

Ամեն հայ իր հոգու խորքում փայփայում է մի երազանք՝ իր աչքերով տեսնել հնագույն Վանն ու Անին, Աղթամար կղզին, Մուշն ու Սասունը, Կարսն ու Իգդիրը, Սարիղամիշն ու Արդահանը, Սուլուխի կամուրջն ու Էրզրումը, Բայազետը, Բագավանն ու Նոյաս լեռը, ուր 301 թ. քրիստոնեությունն ընդունվեց որպես պետական կրոն:

Այդ երազանքն այսօր կարող է դառնալ իրականություն՝ «Անիտուր» տուրիստական գործակալությունը քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակի կապակցությամբ կազմակերպում է 8-10-օրյա շրջագայություն այդ պատմական վայրերը:

Ո՞ր մի հայը չի օգտագործի իր կարոտը փարատելու այս բացառիկ հնարավորությունը: Այցելեք եւ վայելեք Վանի հողի շունչը, Անիի կարոտաբաղձ կանչը, հեռու ու մոտիկ Կարսն ու Իգդիրը:

«Անիտուր», եւ պատմության փակ դռները բացվում են:

Հասցեն Խորենացու 26, 2-րդ հարկ
Հեռ. 52-78-50, 55-75-03

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիլ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 7. 09. 2001 Գինը՝ 100 դրամ